https://doi.org/10.46991/hc.2023.20.2.067

Activites of Hakoba Zavriyan during the resumption of the Armenian question (1912-1914)

Manyak Eranosyan
https://orcid.org/0009-0007-7469-872X
Junior Researcher at the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia
yeranosyanmano@gmail.com

Keywords: Armenian question, reforms, A. Zavriyan, S. Sazonov, M. Girs Dashnaktsutyun, Western Armenia, Ottoman Empire, Constantinople, Russia.

In Armenian and world historiography, enough work has been done in the direction of studying the issue of Armenian reforms in 1912-1914, the policies of different states and the activities of individuals, however, the activities of the well-known politician, Dr. Hakob Zavriyan,s activity in the mentioned years were not the subject of a separate study, although Over the past years, some authors, as well as us, have found in the archives and published a number of documents that remained outside scientific circulation.

In the context of the processes taking place at the global and national levels, the article presents the activities of Hakob Zavriyan in the national, but especially the international arena to open the Armenian question in the specified period before the signing of the reform agreement.

In our opinion, he did significant organizational work at the national level to unite different layers of Armenians and develop reform programs. And in the international arena, A. Zavriyana promoted the issue of reforms, especially in his numerous contacts with the governments of Russia and Germany, trying to give their policies a pro-Armenian direction.

Հակոբ Զավրիյանի գործունեությունը Հայկական հարցի վերաբացման տարիներին (1912-1914 թթ.)

Մանյակ Երանոսյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Հիմնաբառեր՝ Հայկական հարց, բարենորոգումներ, Հ. Զավրիյան, Ս. Սազոնով, Մ. Գիրս, Դաշնակցություն, Արևմտյան Հայաստան, Օսմանյան կայսրություն, Կ.Պոլիս, Ռուսաստան:

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 67-91.
Received: 09.07.2023
Revised: 12.11.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Activites of Hakoba Zavriyan during the resumption of the Armenian question (1912-1914)

Հակոբ Զավրիյանի գործունեությունը Հայկական հարցի վերաբացման տարիներին (1912-1914 թթ.)

Հայ և համաշխարհային պատմագրության մեջ բավականաչափ աշխատանքներ են կատարվել 1912-1914 թթ. հայկական ռեֆորմների հարցի, այդ շրջանում առանձին պետությունների քաղաքականության, և թե՛ առանձին անհատների գործունեության ուսումնասիրության ուղղությամբ, բայց հայտնի քաղաքական գործիչ, բժիշկ Հակոբ Զավրիյանի նշված տարիների գործունեությունը առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել, թեև տարիների ընթացքում որոշ հեղինակների նաև մեր կողմից արխիվներում հայտնաբերվել և հրապարակվել են գիտական շրջանառությունից դուրս մնացած մի շարք փաստաթղթեր:

Հոդվածում համաշխարհային ու ազգային մակարդակներում տեղի ունեցած գործընթացների համատեքստում ներկայացվել է նշված շրջանում Հայկական հարցի վերաբացման ազգային, բայց հատկապես միջազգային ասպարեզում Հակոբ Զավրիյանի գործունեությունը մինչև ռեֆորմների պայմանագրի ստորագրումը:

Մեր կարծիքով նա ազգային հարթությունում զգալի կազմակերպչական աշխատանք է կատարել հայերի տարբեր շերտերի համախմբման, ծրագրերի մշակման գործում: Իսկ միջազգային ասպարեզում Հ. Զավրիյանը ռեֆորմների հարցը առաջ է մղել հատկապես ռուսական և գերմանական կառավարությունների հետ իր բազմաթիվ շփումներում՝ փորձելով նրանց քաղաքականությանը տալ հայանպաստ ուղղություն:

Деятельность Акоба Заврияна в период возобновления армянского вопроса (1912-1914 гг.)

Маняк Ераносян

Младший научный сотрудник Института истории Национальной академии наук Республики Армения

Ключевые слова: Армянский вопрос, реформы, А. Завриян, С. Сазонов, М. Гирс Дашнакцутюн, Западная Армения, Османская империя, Константинополь, Россия.

В армянской и в мировой историографии было сделано достаточно работ в направлении изучения вопроса армянских реформ в 1912-1914 годов., политики отдельных государств и деятельности отдельных лиц, однако деятельность известного политика, доктора Акоба Заврияна в упомянутые годы не была предметом отдельного исследования, хотя за прошедшие годы некоторыми авторами, а также нами в архивах были найдены и опубликованы ряд документов, оставшихся вне научного оборота.

В контексте процессов, происходивших на глобальном и национальном уровнях, в статье представлена деятельность Акоба Заврияна на национальной, но особенно международной арене по открытию армянского вопроса в указанный период до подписания соглашения о реформе.

На наш взгляд, он проделал значительную организационную работу на национальном уровне по объединению разных слоёв армян и разработке программ реформ. А на международной арене А. Заврияна продвигал вопрос реформ, особенно в своих многочисленных контактах с правительствами России и Германии, пытаясь придать их политике про армянское направление.

* * *

Մուտք: 1908 թ. Օսմանյան կայսրությունում իրականացված հեղաշրջման ժամանակ թե՛ թուրքերի, և թե՛ հայերի մոտ մտայնություն կար, որ Աբդուլ Համիդ Երկրորդին իշխանությունից զրկելով կփոխվեն և՛ թուրք-հայկական ազգամիջյան հարաբերությունները, և՛ կայսրության միջազգային դրությունը, քանի որ սահմանադրական ուղի բռնած, ազգերի համերաշխության ուղղությամբ շարժվող Օսմանյան պետության ներքին գործերին միջամտելու, հումանիտար ներխուժումներ անելու, նրանից տարածքներ զավթելու հիմքեր չեն լինի: Բայց տեղի է ունենում հակառակը, 1908 թ. մինչև 1912 թ. արագ քայլերով դեպի բախում գնացող երկու ռազմաքաղաքական դաշինքների պետությունները իրականացնում են Օսմանյան տերության դեմ ուղված բազմաթիվ գործողություններ*, որոնք ակնհայտ են դարձնում, որ նրանց նպատակը շարունակում է մնալ օսմանյան ժառանգության բաժանումը, իսկ մնացած խուսույթը ընդամենը միջոցի դեր է կատարում: Միաժամանակ մեծածավալ ու հատկապես եվրոպական տարածքների կորուստը երիտթուրքերի մոտ էլ ավելի է սրում ազգայնական տրամադրությունները, ինչի արդյունքում նրանք օսմանականության գաղափարախոսության փոխարեն 1911 թ. պետական քաղաքականության մակարդակի են բարձրացնում թյուրքականության գաղափարախոսությունը:

Ներկայացված գործընթացներին զուգահեռ սկսում են վատթարանալ հեղաշրջումից հետո բարելավված հայ-թուրքական հարաբերությունները: Թուրքերի ազգայնական քաղաքականությունը սուր ծայրերով սկսում է ուղղվել հայերի դեմ, ինչը ծանրացնում է հայերի դրությունը: Վերջիններս այդ ու Թուրքիայի հատկապես Բալկանյան առաջին պատերազմից հետո նրա թուլացման պայմաններում նորից փորձում են արտաքին միջամտությամբ հասնել Արևմտյան Հայաստանում ռեֆորմների* իրականացման հատկապես, որ ռուսական կողմը դրական ազդակներ էր հղում հայերին, իսկ իթթիհատականները պարբերաբար չէին կատարում հայերին խոստացված վերափոխումները:

Ի տարբերություն նախորդ փուլերի՝ 1910-ական թթ. սկզբին միջազգային բարենպաստ նախադրյալներով պայմանավորված Հայկական հարցի վերաբացման համար չեն պահանջվում ապստամբություններ, հազարավոր հայերի կյանքեր, բայց այն նախորդների համեմատ դառնում է առավել տևականորեն ու ակտիվորեն քննարկվողը:

Միաժամանակ ներկայացված իրողությունները մասնավորապես մեծ տերությունների իշխանությունների առջև ակտիվ շփումների միջոցով ազգային խնդիրներ ներկայացնելու ու շահերը առաջ մղելու անհրաժեշտությունը հայերի առջև նոր խնդիրներ են առաջադրում, որոնք այլևս

---

* 1908 թ. Բուլղարիայի անկախացումը, Բոսնիայի և Հերցոգովինայի բռնակցումը Ավստրո-Հունգարիայի կողմից, 1909-1912 թթ. Ալբանիայի ապստամբությունները, 1911-1912 թթ. Իտալո-թուրքական պատերազմը և Տրիպոլիտանիայի և Կիրինայիկայի գրավումը Իտալիայի կողմից, Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Ն. Չարիկովի դեմարշը, 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներ և այլն:

* Հետևելով գիտական գրականության մեջ ձևավորված ավանդույթին «ռեֆորմ», «վերափոխում», «բարեփոխում» և «բարենորոգում» հասկացությունները կիրառում ենք զուգահեռաբար, թեև կարծում ենք, որ ռեֆորմները պարտադիր կերպով չեն վերածվում բարենորոգումների կամ բարեփոխումների:

կաթողիկոսներն ի վիճակի չէին լուծելու, ուստի պատահական չէ, որ 1912 թ. նոյեմբերի 10-ին Գևորգ Ե կաթողիկոսը Եվրոպայում հայկական բարենորոգումների խնդրի շուրջ բանակցություններ վարելու նպատակով հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար** փաշային նշանակում է իր ներկայացուցիչ: Այդպիսով՝ իր ծագմամբ, կարողություններով ու կապերով եվրոպական պետությունների ղեկավարների համար ընկալելի, ընդունելի Պողոս Նուբարը ստանձնում է հայերի խնդիրներն ու շահերը նրանց առջև ներկայացնողի դերը, որ կատարում է տարիներ շարունակ:

Այդուհանդերձ, նույն ժամանակահատվածում Պողոս Նուբարին զուգահեռ, նրան լրացնելով, հայության համար այդպիսի գործառույթներ է իրականացնում նաև հայ իրականության տվյալ շրջափուլի ամենաազդեցիկ քաղաքական ուժի՝ ՀՅԴ-ի ներկայացուցիչ, մասնագիտությամբ բժիշկ Հակոբ Զավրիյանը***: Բայց, ցավոք, նրա գործունեության մասին ընդհանրապես և խնդրո առարկա փուլի վերաբերյալ մասնավորապես, մինչ օրս չի կատարվել որևէ նշանակալի, ամփոփ ուսումնասիրություն, թեև շատ հեղինակներ անդրադարձել են նրա գործունեության որոշ դրվագների ու հատկապես 1912 թ. դեկտեմբերին Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսի հետ նրա հանդիպմանը: [Գեղամեանց, 1916, 517-520, Լեո, 1925, 270: Անանուն, 1926, 522: Борьян, 1928, 277-278, Կիրակոսյան, 1965, 118-119, Սարգսյան, 1964, 77, Սարգսյան, 1972, с. 289, Սարուխանյան, 1997, 120, Գալոյան, 2004, 572-573, Սիմոնյան, 2013, 121]:

Նշելի է, որ հայ և համաշխարհային պատմագրության մեջ բավականաչափ աշխատանքներ են կատարվել թե՛ հայկական ռեֆորմների հարցի [Ատոմ, 1914, Գեղամեանց, 1916, Լեո, 1994, Զօհրապ, 1973, Մինասյան, 2004, Davison, 1948, Dussen, 1986], թե՛ մի շարք պետությունների քաղաքականության [Коджоян, 1990, Խաչատրյան, 2000, Ղամբարյան, 2006], և թե՛ առանձին անհատների* գործունեության ուսումնասիրության ուղղությամբ, բայց նշված տարիներին Հակոբ Զավրիյանի գործունեությունը առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել, թեև տարիների ընթացքում որոշ ուսումնասիրողների նաև մեր կողմից արխիվներում հայտնաբերվել ու հրապարակվել են գիտական շրջանառությունից դուրս մնացած մի շարք փաստաթղթեր [ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թթ. 85-86, 87-96, ֆ. 503, ց. 1, գ. 53, ՀԱԱ, Միկրոժապավեններ, Материалы фондов

** Պողոս Նուբար փաշա (1851-1930), հայ ականավոր քաղաքական գործիչ, Եգիպտոսի վարչապետ Նուբար Փաշայի որդին: 1906 թ. հիմնադրված ամենամեծ բարեգործական ընկերության՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության առաջին նախագահը:

*** Հակոբ Զավրիյանը (Զավրիև) (1866-1920) ծնվել է Թիֆլիսում, ազնվականի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի գիմնազիայում, ապա տեղափոխվելով Ս.Պետերբուրգ՝ 1892 թ. ավարտել է ռազմաբժշկական ակադեմիան: Ուսանողության տարիներին նրա վրա մեծ ազդեցություն է թողել երիտասարդներին դեպի իրենց մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը տանող ազգային շարժումը: Չնայելով Ս.Պետերբուրգում բժշկի առաջընթացի համար ստեղծված լավագույն պայմաններին՝ 1900 թ. դոկտորական ատենախոսություն պաշտպանած Հ. Զավրիյանը վերադառնում Կովկաս և աշխատանքի անցնում Բաքվի Բալախանի հիվանդանոցում: Այստեղ Հ. Զավրիյանը ծանոթանում է Արևմտյան Հայաստանում ապրող հայության ծանր վիճակին և մտնում Դաշնակցության շարքերը: 1905 թ. նա անցնում է Արևմտյան Հայաստան և ծավալում է ակտիվ գործունեություն:

* Տե՛ս Նուպար եւ Նուպարաշէն, Փարիզ, 1929, Թէրզիպաշեան Ա., Նուպար, Փարիզ, 1939, Գէորգեան Տ., Նուպար փաշա. Պետական մարդը եւ արդարութեան ռահվիրան, «Արև», Գահիրէ, 1976, 5 ապրիլի, Հուշամատեան Պօղոս Նուպար փաշայի, Լոս Անջելես, 1986, Պօղոսեան Ս., Պօղոս Նուբար Փաշա. Ազգային գործիչը, Ե., 2004, Բոյաջյան Հ., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912–1914 թթ., Ե., 2010, Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915–1918. Documents, ed. by V. Ghazarian, Waltham, 1996.

архива внешних сношений царской России, КМФ-13 а, СА [поступление] - 54, ф. Политархив, оп. 1894-1917 гг., д. 3459, лл. 12-15, д. 3465, лл. 102-107, 132]:

Սույն հոդվածում նպատակ ենք հետապնդել հայկական ռեֆորմների հարցի համապատկերին ներկայացնելու, տեղայնացնելու Հ. Զավրիյանի գործունեությունը 1912-1914 թվականներին մինչև ռեֆորմների պայմանագրի ստորագրումը: Ընդհանուր տեսուչների ընտրության, նշանակման ու հետագա ճակատագրի շրջանում Հ. Զավրիյանի գործունեությունը դուրս է այս հոդվածի շրջանակներից: Այդ կապակցությամբ հանդես կգանք այլ հոդվածով:

Հայկական հարցի վերաբացման գործընթացը: Հայկական հարցի վերաբացման շրջանում կարևոր կենտրոններից մեկը Կ.Պոլիսն էր, որտեղ և բավականին ակտիվ գործունեություն է սկսում ծավալել դեռևս 1905 թվականից Արևմտյան Հայաստան անցած, դադարներով հիմնականում Մուշում մասամբ էլ Էրզրումում գործունեություն ծավալած Հ. Զավրիյանը:

1911 թ. վերջին արդեն երիտթուրքերի հետ հարաբերությունները սառեցրած և որպես այլընտրանք Ռուսաստանում իր դիրքերը վերականգնել ձգտող ՀՅԴ-ի ներկայացուցիչները Գ. Զոհրապի միջոցով հանդիպման հնարավորություն ստանալով, ջանք չեն խնայում իրենց նկատմամբ Ռուսաստանի կառավարության վստահությունը վերականգնելու, դրական վերաբերմունքի արժանանալու համար[**]: Պետք է ասել, որ հանդիպման ընթացքում դաշնակցականների արած դիտարկումները լիովին համապատասխանում էին Ռուսաստանի պետական շահերին ու մասնավորապես Արևելյան հարցում որդեգրած քաղաքականությանը, ուստի պատահական չէ, որ Կ.Պոլսում ռուս դեսպան Ն. Չարիկովը, ոչ հեռու ապագայում հայերին ու մասնավորապես նրանց ամենաազդեցիկ կուսակցությանը Ռուսաստանի պետական շահերի տեսանկյունից օգտագործելու նկատառումներից ելնելով, խորհուրդ է տալիս, որ Ռուսաստանի իշխանությունը ավելի շատ մեծահոգություն և ողորմություն ցուցաբերի Ս. Պետերբուրգում նախատեսված դատավարության ընթացքում [ՀԱԱ, Միկրոժապավեններ, ф. Политархив, оп. 482, д. 3459, л. 15]: Ըստ երևույթին՝ նրա դիտարկումները ևս ռուսական իշխանությունները հաշվի են առնում և Դաշնակցության դատի արդյունքում հրապարակվում են անհամեմատ մեղմ դատավճիռներ:

Բնականաբար, այս գործընթացները ներքին հող են նախապատրաստում կողմերի հարաբերությունների բարելավման, որոշակի փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը: 1912 թ. ապրիլի կեսերին Կ.Պոլսի պատրիարք Հովհաննես Արշարունու[*] Գևորգ Ե-ին գրած նամակը հուսադրող ազդակների, ռուսական կառավարության ջերմացման մասին էր վկայում [Սիմոնյան, 22-23]: Իսկ 1912 թ. հունիսի սկզբին դեռևս չօծված կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին ցարական պալատում հասկացնում են, որ արքունիքը անտարբեր չէ հայերի ճակատագրի հանդեպ և եթե առաջիկայում մեծ տերությունները ստիպված լինեն կրկին վերադառնալ Հայկական հարցին, ճիշտ կլինի՝ խնդրի լուծման գլխավոր դերակատարությունը ստանձնի Ռուսաստանը [Սիմոնյան 21]:

[**] ՀԱԱ, Միկրոժապավեններ, ф. Политархив, оп. 1894-1917 гг., д. 3459, л. 12-15: Տե՛ս նաև Коджоян Р., Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны" /кандидатская диссертация/, Е., 1990, с. 41.

[*] Արշարունի Հովհաննես պատրիարքի (1911-1913) օրոք Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը քայլեր է ձեռնարկել հայկական բարենորոգումների ծրագրի ստեղծման, հանձնաժողովների կազմման և գործունեության ուղղությամբ: 1913 թ. օգոստոսի 2-ին արդարադատության և դավանանքների նախարարությանը ներկայացված դիմումի համաձայն դադարեցվել է նրա ծառայությունը:

Ներկայացվածը խոսում է այն մասին, որ Ռուսաստանը 1912 թ. առաջին կեսին սկսում է դրական ազդակներ ուղղել հայ քաղաքական ուժերին ու կրոնական առաջնորդներին:

1912 թ. աշնանը Իտալո-թուրքական պատերազմի՝ վերջինի համար բացասական ավարտը և Ռուսաստանի կազմակերպմամբ սկսված Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը նոր իրադրություն են ստեղծում: Ռուսաստանը, Արևմտյան Հայաստանը որպես իր ազդեցության ոլորտ ամրագրելու, երաշխավորելու, ինչպես նաև Օսմանյան կայսրությունը ավելի թուլացնելու, նպատակով*, սկսում է իր քաղաքականությունը կազմակերպել երկու զուգահեռ հարթություններում:

Առաջինը միջազգային հարթությունն էր, երբ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովը դեկտեմբերի 13-ին դիվանագիտական խողովակներով հրահանգում է կապվել Անտանտի իր դաշնակիցների հետ՝ ճշտելու նրանց վերաբերմունքը և գործակցության սահմանները [Геноцид армян, 2002, 126]**: Այնուհետև դիմում է Օսմանյան կայսրությանը Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու պահանջով: Միաժամանակ այս հարթության մեջ ռուսական կողմը արժանանում է Օսմանյան կայսրության*** և Գերմանիայի հակազդեցությանը****:

---

* Ս. Սազոնովը 1916 թ. հայկական ռեֆորմների պատմության մասին իր զեկուցման մեջ գրում է, որ Ռուսաստանը Թուրքիան թուլացնելու համար իր պետական խնդիր էր համարում՝ աջակցելու Թուրքիայի հայերին: Այդ նպատակով ռուսական դիվանագիտությունը 1912 թ. սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել Թուրքահայաստանում ռեֆորմներ անցկացնելու համար: Հետագայում իր հուշերում Սազոնովը նշում է, որ ինքը խիստ մեծ կարևորություն էր տալիս հայկական բարենորոգումներին այն պատճառով, որ նրա բարեհաջող ավարտը լավ տպավորություն կթողներ Թուրքիային սահմանակից իր շրջանների բազմաթիվ հայ ազգաբնակության վրա: Մասուրեան Ս., Հայկական բարենորոգումները (Սազոնովի հուշերից) // «Հայրենիք», Բոստոն, 1928, թիվ 65), Сазонов С., Воспоминания'', М., 1991, с. 162-163: Տե՛ս Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 1, сост. Ю. Барсегов, М., 2002, /այսուհետ՝ Геноцид армян/, с. 228 նաև Davison R., նշվ. աշխ., էջ 489. Ինչ վերաբերում է ռազմական ներխուժմանը, ապա իրականում Ռուսաստանը դրան պատրաստ չէր, սակայն որպես ռեֆորմների ձախողման այլընտրանք այդ մասին խոսվում էր: Տե՛ս Davison R., նշվ. աշխ., էջ 488-489, Геноцид армян, с. 123-124.

** Геноцид армян, с. 126. Այս առումով՝ նշելի է, որ և՛ Մեծ Բրիտանիան, և՛ Ֆրանսիան կարծում էին, որ Թուրիքիայի արևելյան վիլայեթները արժանանալու են եվրոպական մասի տարածքների ճակատագրին, բայց այդ փուլում պատրաստ չէին, դեմ էին Թուրքիայի բաժանմանը կամ արևելյան վիլայեթների բռնազավթմանը (Dussen W. van der, նշվ. աշխ., էջ 15, Davison R., նշվ. աշխ., էջ 489): Այդուհանդերձ, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան որպես դաշնակիցներ զուսպ ձևով աջակցում են, չեն ընդդիմանում ռեֆորմների հարցի առաջ քաշելուն:

*** Կանխարգելելով արտաքին միջամտությունը՝ «Ազատություն և համաձայնություն» (Hürriyet ve İtilâf) կուսակցության կառավարությունը առաջարկում է ռեֆորմների իր պլանը: Ըստ Մ. Գիրսի Ս. Սազոնովին դեկտեմբերի 17-ին գրած նամակի՝ նախատեսվում էր առանց Սեբաստիայի ու Էրզրումի, հայկական 4 վիլայեթներից կազմել երկու ընդհանուր-տեսչություն, որոնց ղեկավարներին ենթարկվելու էին վալիները և հանձնաժողով՝ բաղկացած 3-ական մուսուլմանից ու քրիստոնյայից, նախագահությամբ ընդհանուր տեսուչի օտարերկրացի խորհրդականի: Տե՛ս Геноцид армян, с. 127, Davison R., նշվ. աշխ., էջ 493.

**** Գերմանիանի հակազդեցությունը նման էր պայթունի: Վերջինը հայտնի երկաթուղու կապակցությամբ մեծ ազդեցություն էր հաստատել Կիլիկիայում և ակտիվություն էր սկել ցուցաբերել Վանի ու Բիթլիսի նահանգներում, քանի որ նախատեսում էին իրենց ազդեցության դաշտը հասցնել մինչև Պարսկաստան: Բնականաբար Գերմանիայի ձգտումները հակադրվում էին Անտանտի երեք տերությունների շահերին: 1913 թ. հունվարին Գերմանիան՝ հանձին Կ.Պոլսում իր դեսպան Հանս ֆոն Վանգենհայմի, երկյուղում էր, որ Ռուսաստանը Անատոլիան (ըստ երևույթին՝ Ռոդերիկ Դևիսոնը Անատոլիա ասելով հասկանում է Փոքր Ասիան և Արևմտյան Հայաստանը- Մ. Ե.) կբաժանի և նրա քաղաքականությունը որակում էր որպես սադրանքային, սակայն շուտով նա հասկանում է, որ հայերի դժգոհությունները արդար են և պաշտպանում է բարենորոգումները արդյունավետ դարձնելու հարցում Թուրքիայի հետ համագործակցությունը: Այդպիսով՝ Գերմանիան նախատեսում էր չեզոքացնել Ռուսաստանի ներխուժումը, Թուրքիան

Երկրորդը հայկականն էր: Այդ պայմաններում, նույն ժամանակ Ռուսաստանի ներշնչմամբ կամ նրա առանձին կառույցների (Կովկասի փոխարքայության) նախաձեռնությամբ հայկական կողմը սկսում է դիմել գործողությունների: Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Թիֆլիսում Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի ազդեցության, վերահսկողության տակ գտնվող հայ ազատական ուժերը կազմակերպվում են, դիմում կաթողիկոսին [Հայերի ցեղասպանությունը…, 1991, 282], հետո ստեղծում են Ազգային բյուրոն, իսկ նրանց ուղղորդմամբ գործող Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմում է Նիկոլայ Երկրորդին*, ապա ազդեցիկ հայ գործիչ Պողոս Նուբարին նշանակում Եվրոպայում հայկական բարենորոգումների հարցով իր ներկայացուցիչ**:

Հ. Զավրիյանի գործունեությունը Կ.Պոլսում: 1912 թ. դեկտեմբերի 10-13-ի միջակայքում Հ. Զավրիյանը հանդիպում է Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Միխայիլ Գիրսին: Վերջինս դեկտեմբերի 14-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին գրում է, որ այդ օրերին իրեն է այցելել դաշնակցական նշանավոր գործիչ Հակոբ Զավրիյանը, ով մինիստրությանը հայտնի էր որպես 1905 թ. Ռուսաստանում արևմտահայությանը բժշկական օգնություն ցուցաբերելու համար 1905 թ. Ռուսաստանում կազմակերպված բժշկական ջոկատի ղեկավար և Թուրքիայում հայկական հարցի վերաբերյալ 1907 թ. գրած զեկուցման հեղինակ: Մ. Գիրսը գրում է, որ բժիշկ Զավրիյանը, մռայլ գույներով ներկայացնելով արևմտահայության ծանր վիճակը, նրանց նկատմամբ կատարվող ապօրինությունները, նշում է, որ միմիայն Օսմանյան կայսրության նկատմամբ կիրառված Ռուսաստանի ճնշմամբ է կարելի բարելավել հայերի վիճակը: Միաժամանակ բժիշկը դեսպանից խորհուրդ է հարցնում, թե հայերը ինչպիսի վարքագիծ դրսևորեն: Մ. Գիրսը Հ. Զավրիյանին պատասխանում է, որ Ռուսաստանի կառավարությունը հետևում է Հայկական հարցին, բայց հայերը չպետք է աչքաթող անեն ներկա բացառիկ պայմանները և անզգույշ քայլերով վատթարացնեն իրենց դրությունը: Նա բժշկին խորհուրդ է տալիս Եվրոպայի աչքին երևալ

իր հերթին շնորհակալ կլիներ աջակցության համար, իսկ հայերը հանձին Գերմանիայի կտեսնեին բարեկամներ: Տե՛ս Davison R., նշվ. աշխ., էջ 489, 491-492.

* Մասնավորապես կաթողիկոսը, Վորոնցով-Դաշկովին նկարագրելով արևմտահայության վիճակը, նշում է, որ այդ հիմամբ վճռել է Ս. Պետերբուրգ ուղարկել Էջմիածնի հայ լուսավորական սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոսին՝ դիմելու Զերդ պայծառափայլությանը, հանձնելու Կ.Պոլսի պատրիարքի զեկույցի և թաքրիրի թարգմանությունը և բանավոր ծանոթացնելու հանգամանքների հետ: Վերջում Գևորգ Ե-ն փոխարքայի միջոցով դիմում է Արևելքի քրիստոնյա ժողովուրդների վաղնջական պաշտպանին և հանուն Աստծո աղերսում է, իրենց հովանավորության տակ առնեն Թուրքահայաստանի բազմաչարչար հայ ժողովրդին: *Հայերի ցեղասպանությունը…, էջ 283-284:* Երկրորդ անգամ կաթողիկոսը 1912 թ. դեկտեմբերի 24-ին է դիմում ռուսաց կայսրին, նշելով, որ վերջին ժամանակներս Բալկանյան թերակղզում ծավալված արյունոտ իրադարձությունները վերստին և ամբողջ ուժով առաջ են քաշում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների դրության բարելավման վաղուց հասունացած հարցը: Եկել է այն պահը, երբ ամենքը սրտի դողով սպասում են Ռուսաստանի պատմական մեծ առաքելության իրականացմանը՝ դարավոր տառապանքներից Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ազատագրմանը: Այդ ժողովուրդների թվում է հայ ժողովուրդը…: Ըստ կաթողիկոսի, սակայն, հայերը ակնկալում են ռեֆորմների միջոցով կյանքի, պատվի և ունեցվածքի իսկական ապահովում և նրանց հոգևոր ու կուլտուրական ազատ զարգացման հնարավորությունների ընձեռում: Նա ակնկալում էր, որ Լոնդոնում նախատեսված մեծ տերությունների դեսպանների խորհրդակցության ժամանակ բարձրացվի նաև Հայկական հարցը: *Հայերի ցեղասպանությունը…, էջ 299-303:*

** 1912 թ. հոկտեմբերին Ս. Պետերբուրգում կաթողիկոսի պատվիրակ Մեսրոպ եպիսկոպոսի (Տեր Մովսիսյան) հետ զրույցի ժամանակ Ռուսաստանի վարչապետ Վ. Կոկովցևն ու արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովը հայտնել էին, որ լավ կլիներ, եթե հայերը Եվրոպայում էլ դիմումներ անեին մեծ տերություններին (Լեռ, Անցյալից, էջ 248), ուստի 1912 թ. նոյեմբերի 10-ին Գևորգ Ե-ն Պողոս Նուբարին նշանակում է բարենորոգումների հարցով իր ներկայացուցիչը: Վերջինս լիազորություն ուներ Բեռլինի 1878 թ. պայմանագիրը ստորագրած պետությունների առջև բարձրացնելու Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման հարցը (Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Ե., 2002, էջ 23):

որպես թուրքական բռնության զոհեր, այլ ոչ թե քաղաքական հեղափոխականներ, ովքեր, օգտվելով թուրքական ռազմական անհաջողություններից, ցանկանում են իրագործել իրենց ազգայնական ձգտումները: Այդ պատճառով, ըստ դեսպանի, հայերը չպետք է զրգռեն թուրքերին, առավել ևս խուսափեն ապստամբություն բարձրացնելուց [ՀԱԱ, Միկրոժապավեններ, ф. Политархив, 1912, д. 1044, л. 314-315]: Նմանապես հայերը պետք է խույս տային Եվրոպային որևէ քաղաքական պահանջ ներկայացնելուց, բայց կարող էին ինչպես մամուլի, այնպես և իրենց կոչերի միջոցով ընդհանուր ուշադրությունը հրավիրել քրդերի և թուրքական իշխանությունների կողմից կիրառված հալածանքների վրա: Վերջապես, Հ. Զավրիյանը Մ. Գիրսին հայտնել է, որ նրա խոսքերի ոգով կաշխատի ազդելու իր կուսակցական ընկերների ու համախոհների վրա և որ հայերը ընդհանուր առմամբ կարծում են, թե իրենց ճակատագիրը կախված է Ռուսաստանից [Будущее устройство Армении, 1915, л. 12-14, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), 1972, 158-160]*:

Այս հանդիպումից հետո Կ. Պոլսի ազգային մարմիններում կազմակերպական աշխատանքները բարձրանում են նոր մակարդակի: Այսպես՝ 1912 թ. դեկտեմբերի 21-ին (ն.տ. 1913 թ. հունվարի 3) արևմտահայոց Ազգային ժողովը պատրիարք Հովհաննես Արշարունու նախագահությամբ դռնփակ նիստերում քննարկում է հայկական բարենորոգումների հարցը [Սիմոնյան, 2013, 107, Զոհրապ, 2003, 22:]: Արդյունքում որոշվում է Ազգային վարչությանը առընթեր ստեղծել ութ հոգուց բաղկացած Ապահովության հանձնաժողով: Վերջինը 1913 թ. հունվարին նիստ է հրավիրում՝ մշակելու համար բարենորոգումների նախագիծ: Կոմսն (Վահան Փափազյան) իր հուշերում գրում է, որ նիստի սկզբում հատուկ փափկանկատությամբ ինքը հանձնախմբին հայտնել է, որ խնդրո առարկայի կապակցությամբ ունի պատրաստված նյութ: Նշենք, որ այն 1912 թ. դեկտեմբերի սկզբներին պատրաստել էին դաշնակցականներ Ս. Զավարյանը, Է. Ակնունին, Հ. Զավրիյանը, Ռ. Զարդարյանը և ինքը՝ Կոմսը [Փափազեան, 1952, 218, Փափազյան, 1934, 63]: Ըստ հուշագրի՝ թեև Ապահովության հանձնաժողովի անդամները անմիջապես հասկանում են, թե նախագիծը որտեղից է գալիս, այնուամենայնիվ, պատճառ չեն տեսնում մերժելու այն, մանավանդ որ իրենց մեջ չկար մեկը նախապատրաստված նման աշխատանքի համար: Չնայած կատարված որոշակի փոփոխությունների՝ պատրիարքարանի նախագծի հիմքում դրվում է ՀՅԴ-ի կողմից ներկայացված նախագիծը, որը վավերացվում է պատրիարքի կողմից [Փափազեան, 1952, 219-220, Սիմոնյան, 2013, 119-120: Մանվելյան, 2019, 386] :

Դաշնակցության, մասամբ պատրիարքարանի և ռուսական իշխանությունների միջև կապող օղակի դեր կատարող՝ Հ. Զավրիյանը, ով պատրիարքարանի բարենորոգումների նախագծում միջնորդավորված կերպով որոշակի ներդրում էր ունեցել ու հանդիսանում էր բարենորոգումների

* Նույն դեկտեմբերի վերջին Հ. Զավրիյանը հանդիպում է նաև Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանության թարգման Ա. Մանդելշտամի և Ֆրանսիայի դեսպանի հետ: Առաջինի հետ հանդիպումը ընդհանուր բնույթի մտքերի փոխանակման բնույթ ուներ: Տե՛ս Саркисян Е. К., Армянский вопрос и Россия в 1912-1914 гг., // «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1995, N 1, էջ 113: Իսկ Ֆրանսիայի դեսպանի հետ հանդիպումը հայերի պատկերացումները ներկայացնելն ու Ֆրանսիայի տրամադրվածությունը հասկանալն էր: Ֆրանսիայի դեսպանը խորհուրդ է տալիս բարի հարաբերություններ հաստատել թե՛ Անգլիայի, թե՛ Ռուսաստանի հետ: Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ.աշխ., էջ 130: Եվ վերջապես, նույն օրերին Հ. Զավրիյանը հանդիպումներ է ունեցել նաև Պետերբուրգից Կ. Պոլիս եկած Ն. Ադոնցի ու Ս. Տիգրանյանի հետ: Տե՛ս Ադոնց Ն., հ. Ա, Հայկական հարց, Ե., 1996, էջ 31-32:

գործընթացի վերաբերյալ ամենատեղեկացված անձանցից մեկը, իր անձնական նամակագրության միջոցով մեզ ուշագրավ տեղեկություններ է թողել: Հայաստանի ազգային արխիվի Հ. Զավրիյանի ֆոնդի փաստաթղթերը ուսումնասիրելիս մեր կողմից հայտնաբերվել է իրականում 1908-1914 թթ. Էրզրումում Ռուսաստանի հյուպատոսության քարտուղար Եվգենի Վիշինսկուն*, բայց գաղտնիության նկատառումներով նրա կնոջ՝ Աննա Օտտոնվնայի անվամբ 1913 թ. հունվար 6/19/-ին Հակոբ Զավրիյանի գրած նամակը, որը 1913 թ. սկզբի դրությամբ ռեֆորմների, հայերի ակնկալիքների մասին ուշագրավ տեղեկություններ է պարունակում: Ե. Վիշինսկու հետ Հ. Զավրիյանը, թերևս, ծանոթացել է Արևմտյան Հայաստանում գործունեության ընթացքում: Նամակի բովանդակությունից երևում է, որ Հ. Զավրիյանը այն գրել է Ե. Վիշինսկու, նրա զեկուցագրի միջոցով փոխարքայի շրջապատի և շղթայական Ս. Պետերբուրգի վրա ազդելու նպատակով: Սկզբում նամակագիրը հայտնում է, որ ցանկանում է գնալ Ս. Պետերբուրգ, բայց Մ. Գիրսը, ումից ամբողջ գործընթացում շատ բան է կախված, և Ռուսաստանի դեսպանատան առաջին թարգմանը Կ.Պոլսում՝ Ա. Մանդելշտամը, չեն թողնում, մինչև բարենորոգումների ծրագրի մշակման ավարտը: Զավրիյանը հավանական է համարում, որ իր միջոցով ցանկանում են ազդել իր շրջապատի վրա: Բժիշկը նամակում հաստատում է, որ ռուսական կողմը ցանկանում է հասնել միայն ռեֆորմների իրականացման և մերժում բռնակցումն ու ինքնավարության կարգավիճակը [ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53, թ. 11 շրջ.]: Իհարկե, նա համարում է, որ ինքն ու իր շրջապատը բավարարված կլինեն լայն ու երաշխավորված ռեֆորմներով նաև գիտակցում է, որ հանգամանքների անբարենպաստության, մեծ քաղաքական հարցերի պատճառով է Ռուսաստանը հրաժարվում բռնազավթումից: Բայց նա ավելի շատ ջատագովում է ինքնավար, բուֆերային հայկական տարածքի գաղափարը, որտեղ կարող էր սկսվել Օսմանյան կայսրության այլ տարածքներից, Ռուսաստանից և այլ երկրներից հարյուրհազարավոր հայերի կենտրոնացումը: Չէ որ առկա վիճակով հայերի քանակը չի ավելանալու, այլ պակասելու է, քանի որ թուրքերը ձգտելու են ձևախեղել ռեֆորմները և ի հաշիվ հայերի՝ մուսուլմանական տարրի ուժեղացման նրանց քաղաքականությունը անփոփոխ է լինելու: Հ. Զավրիյանը նշում էր, որ Ռուսաստանին ավելի ձեռնտու է հայերի առկայությունը, քան Կասպիցից մինչև Մարմարա ծովերը ընկած տարածքներում համատարած մահմեդականների, չէ որ Ռուսաստանը իր և Չինաստանի միջև ունի Մոնղոլիա, հանդուրժում է Խիվային և Բուխարային**, ինչու հարկ չի համարում ստեղծել երկու կիսաինքնավար հայկական ու քրդական գավառներ, որոնք եվրոպական խելամիտ կառավարման արդյունքում քսան տարում կկարողանան Թուրքիային հասցնել ռազմական անկման: Ըստ նրա՝ Հայաստանը Ռուսաստանի ազդեցության ոլորտում ընդգրկելը տնտեսական առումով հնարավորություն կստեղծեր Կարսից Էրզրումով Ալեքսանդրետի նեղուց, Միջերկրական ծովով Մոսուլ երկաթուղային ճանապարհ անցկացնել: Այդ ժամանակ ռուսական ապրանքները արևելքի շուկաներում կլինեն տիրապետող և Բաղդադի երկաթուղային

* Վիշինսկի Եվգենի (1873-1920), հայկական կորպուսի ռուս գեներալ, ռազմական կցորդ, հետազոտող, զբաղվել է Անդրկովկասի և Թուրքիայի ուսումնասիրությամբ, գրել աշխարհագրական և վիճակագրական աշխատություններ:

** Բուխարայի էմիրությունը, Կոկանդի և Խիվայի խանությունների հետ կազմում էր Կենտրոնական Ասիայի հիմնական տարածքը, որտեղ ուզբեկական դինաստիաները տիրել են 1512 թվականից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները: Երեք փորձերի արդյունքում 1873 թվականին Ռուսական կայսրությանը հաջողվել էր այստեղ հաստատել իր պրոտեկտորատը, սակայն ինչպես Բուխարայի էմիրությունը, այնպես էլ Խիվայի խանությունը շարունակում են իրենց գոյությունը՝ պահպանելով իշխանության նախկին ինստիտուտները:

ճանապարհը տնտեսապես կընկներ Ռուսաստանի ազդեցության տակ և այլն [ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53, թ. 12-15]:

Պատրիարքարանի բարենորոգումների նախագծի պատրաստումից հետո հայտնի է դառնում, որ Եվրոպայում Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունը մշակել է սեփական նախագիծ, ուստի անհրաժեշտություն է առաջանում միասնականացնել հայկական մոտեցումները: Սկզբում այդ խնդրի լուծումը դրվում է Կոմսի վրա, ով սակայն 1913 թ. փետրվար-մարտ ամիսների ընթացքում չի կարողանում համոզել Պողոս Նուբարին [Փափազեան, 1952, 223, Բոյաջյան, 2010, 89]: Այդ խնդիրը հաջողությամբ լուծում է Հ. Զավրիյանը: Նա Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպանության հետ պատրիարքարանի նախագծի վերաբերյալ դիրքորոշումները պարզելուց հետո մեկնում է Փարիզ և Պ. Նուբարի հետ բանակցելով՝ հասնում նրա զիջմանը: Այդպիսով՝ հաջողվում է հրապարակ հանել հայկական քաղաքական պահանջների մեկ ծրագիր [Փափազեան, 1952, 229-230]:

Նախագծի վերջնական տարբերակն, ըստ էության. պատրիարքարանի նախագիծն էր, որն ստանում է «Միասնական նախագիծ» անվանումը: Շուտով դեսպան Մ. Գիրսը ցանկություն է հայտնում ծանոթանալ փաստաթղթին: Պատրիարքը նախագիծն ուղարկում է նրան: Դեսպանը ուշիուշով ուսումնասիրելուց հետո ցանկություն է հայտնում հանդիպել պատրիարքարանի և Դաշնակցության ներկայացուցիչների հետ: Հանդիպումը տեղի է ունենում ապրիլի 12-ին ռուսական դեսպանատանը և նրա կարգադրությամբ Պատրիարքարանի կողմից ներկայանում է Գրիգոր Զոհրապը, Դաշնակցության կողմից՝ Հ. Զավրիյանը և Ս. Զավարյանը [Միքայելյան, 1965, 182]: Դեսպանը հայ պատվիրակներին ասում է, որ պատրիարքարանի ներկայացրած միասնական ծրագիրը իր վրա լավ տպավորություն է թողել: Այնուամենայնիվ, նախագծի տեքստի վրա կատարում է դիտողություններ, որոնք հաշվի առնելուց հետո նախագիծը պետք է ուղարկվեր Ս. Պետերբուրգ [Սիմոնյան, 2013, 370-371]: Մ. Գիրսը նաև նշում է, որ ռուսական կառավարության դիտողություններից հետո պատրաստի վերջնական ծրագիրը ներկայացվելու է եվրոպական պետությունների դեսպաններին [Միքայելյան, 1965, 182]:

Այդ հանդիպման ժամանակ քննարկվում է նաև արևմտահայ վիլայեթներում հայերի թվաքանակի հարցը: Բանն այն էր, որ թուրքական կողմը հայտարարել էր, թե հայերը բոլոր վիլայեթների մեջ փոքրամասնություն են կազմում, ուրեմն անհեթեթ և անտրամաբանական է բարենորոգումները տարածել միայն վեց վիլայեթների մեջ ապրող փոքրամասնությունների վրա [Թաթոյան, 2015, 146, Татоян, 2015, 696]: Գիրսի հանձնարարությամբ հայկական կողմը քայլեր է ձեռնարկում վիճակագրական տվյալներ ներկայացնելու ուղղությամբ: ՀՅԴ Արևելյան բյուրոն՝ Ս. Զավարյանի նախաձեռնությամբ օգտվելով իր և Պատրիարքարանի վիճակագրական հին արխիվներից, նաև եվրոպացի ճամփորդների և գիտնականների նյութերից և կազմում է վիճակագրական տախտակ: Միաժամանակ խարխլելով թուրքերի աղբյուրների հիմքերը հերքում են նրանց բերած տվյալները: Այդ կարևոր խնդրի լուծմանը Ս. Զավարյանի, Նիկոլ Դումանի, Գ. Փաստրմաճյանի և Կոմսի հետ մեկտեղ մասնակցում է նաև Հակոբ Զավրիյանը: Նրանք արդյունքները տրամադրում են և՛ ռուսական դեսպանատանը, և՛ Ապահովության հանձնաժողովին,

որն այն հրատարակում է առանձին գրքույկով: Այդուհետև թուրքերը այլևս չեն փորձում թվերի շուրջ պայքարը շարունակել [Փափազեան, 1952, 232-233]:

Հայկական հարցը դիվանագիտական քննարկումներում: Մինչ հայերը Ռուսաստանի դիվանագետների հետ համագործակցությամբ հայկական բարենորոգումների ծրագրեր էին մշակում, միջազգային հարթությունում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ: 1913 թ. հունվարի 23-ին բռնի միջոցով նորից իշխանության է գալիս «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, բայց այս անգամ ավելի են ընդգծվում Ի. Էնվերի, Մ. Թալեաթի և Ա. Ջեմալի դիրքերը: Բալկանյան պատերազմի արդեն ակնհայտ աղետալի հետևանքները երիտթուրքերի մոտ ավելի են սրում ազգայնական մղումները, հակաքրիստոնեական տրամադրությունները, իսկ եվրոպական մասի տիրույթների կորուստները ավելի են մեծացնում Փոքր Ասիայի ու Արևմտյան Հայաստանի նշանակությունը [Davison, 1948, 493]: Ստեղծված պայմաններում թուրքերը սկսում են ակտիվ քայլեր ձեռնարկել հայկական ռեֆորմների հարցը ավանդական եղանակով չեզոքացնելու համար: Գերմանիայի հուշումով մարտին նրանք հայտարարում են ռեֆորմների նոր ծրագրի մասին, որով նախատեսվում էր բոլոր վիլայեթների համար վարչական ռեֆորմ անցկացնել ու զգալիորեն ապակենտրոնացնել դրանց կառավարումը: Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև պառակտում առաջ բերելու նպատակով ապրիլին նրանք դիմում են վերջինին՝ խնդրելով պաշտոնյաներ տրամադրել ամբողջ կայսրությունում ռեֆորմներ անցկացնելու համար, որոնց նպատակը առանց ռասսայի և կրոնի խտրականության կայսրության ազգերի բարոյական և նյութական մակարդակը բարձրացնելն էր [Dussen,1986, 17, Davison, 1948, 493]: Անգլիան տատանվում էր, բայց Ռուսաստանի ակնհայտ բացասական դիրքորոշումը հետ է պահում նրան [Davison, 1948, 494-495]: Ս. Սազոնովը պահանջում էր Անտանտի երեք պետությունների պաշտոնյաների մասնակցություն, ինչպես նաև երեք երկրների Կ.Պոլսի դեսպանների կողմից հարցի քննություն: Մեծ Բրիտանիան ընդդիմանում է միայն երեքի մասնակցությանը՝ նշելով, որ գործընթացին պետք է մասնակցեն վեց տերությունները: Կարճ ժամանակ անց գերմանական կողմի հետ զրույցում Գերմանիան պաշտպանում է անգլիացիների դիրքորոշումը [Dussen, 1986, 17, Davison, 1948, 494-495]: Ռուսների դիրքորոշումը ավելի թուլացնելու համար թուրքերը իրենց բանակի և կրթական համակարգի վերակազմակերպման իրավունքը վերապահում են Գերմանիային, իսկ ֆինանսականինը՝ Ֆրանսիային, Ռուսաստանը մնում է ձեռնունայն [Davison, 1948, 494-495] :

Մեկուսացման մեջ մնացած Ռուսաստանը նախաձեռնությունը վերցնում է իր ձեռքը. 1913 թ. հունիսի 7-ին տերություններին առաջարկում է Կ.Պոլսի դեսպանների ժողով գումարել և քննարկել խնդիրը՝ որպես հիմք վերցնելով 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը [Dussen, 1986, 18]: Գերմանիան ցանկանում է նաև թուրքական կողմին մասնակից դարձնել կոնֆերանսին, բայց ռուսները մերժում են՝ փաստարկելով, որ այդպիսով հայերը վստահություն չեն ունենա բարենորոգումների նկատմամբ [Davison, 1948, 495-496]: Հունիսի վերջին Անդրե Մանդելշտամը կողմերին է ուղարկում նախնական ծրագիրը [Dussen, 1986, 18]*:

* Ա. Մանդելշտամի ծրագրի համաձայն՝ կազմվելու էր վեց վիլայեթից բաղկացած մեկ նահանգ, որի գեներալ-նահանգապետի ձեռքում էր կենտրոնացվելու երկրամասի գործադիր իշխանությունը: Գեներալ-նահանգապետը պետք է լիներ թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի, որին տերությունների համաձայնությամբ հինգ տարի ժամկետով նշանակելու էր սուլթանը: Գեներալ-նահանգապետին էր ենթարկվելու կառավարման ապարատը, ժանդարմերիան և ոստիկանությունը: Նա էր նշանակելու ու ազատելու պաշտոնյաներին, դատավորներին: Նահանգի ներկայացուցչական

Հուլիսի 1-ին Թուրքիան Ա. Մանդելշտամի ծրագրին զուգահեռ նոր ծրագիր է ուղարկում տերություններին [Dussen, 1986, 18-19]: Այն նախատեսում էր ամբողջ կայսրությունը բաժանել վեց ընդհանուր տեսչական սեկտորների, որոնք պետք է գլխավորեին ընդհանուր տեսուչները: Երկու արևելյան վիլայեթները պետք է ունենային օտարերկրացի ընդհանուր տեսուչներ, ովքեր պետք է նշանակվեին թուրքական կառավարության կողմից առանց տերությունների միջամտության, սակայն Ռուսաստանի հակազդեցությամբ թուրքական ծրագիրը դեսպանաժողովում չի քննարկվում [Dussen, 1986, 19, Davison, 1948, 497]: Այսպես, հուլիսի 3-24-ը (8 նիստ) Բոսֆորում գտնվող Ենի-Քյոյի պալատում, որը Օսմանյան կայսրությունում Ավստրո-Հունգարիայի դեսպան և միաժամանակ դուայեն* Յոհան ֆոն Պալլավիչինիի (1906-1918] նստավայրում տեղի են ունենում են կոնֆերանսի աշխատանքները: Գլխավորապես Գերմանիայի ու Ռուսաստանի հակադրության պատճառով կոնֆերանսը ձախողվում է: Կոնֆերանսում վեճի հիմնական առարկան հետևյալն էր. Ռուսաստանը կարծում էր, որ առանց իր ծրագրի ընդունման Օսմանյան կայսրության բաժանումը անխուսափելի է, քանի որ հայերը կդիմեն գործողությունների, իսկ Գերմանիան հայտարարում էր, որ բաժանումը կհետևի ռուսական ծրագրի ընդունմանը [Davison, 1948, 497-498, Dussen, 1986, 19]: Նշված և այլ պատճառներով կողմերը կանխատեսելիորեն համաձայնության չեն գալիս, ինչը ծանր տպավորություն է ստեղծում հայերի մոտ և վեց տերությունները հնարավոր բարդություններից խուսափելու համար աշնանը համաձայնության են գալիս մանդատ տալ Մ. Գիրսին և Հ. Ֆոն Վանգենհայմին այնպիսի պայմանագիր մշակել, որը ընդունելի կլինի Բ.Դռան համար [Davison, 1948, 500, Мандельштам, 1915, 50]:

Հակոբ Զավրիյանի գործունեությունը Ռուսաստանում: Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպանի հետ բարենորոգումների ծրագրի հարցերը լուծելուց հետո Հ. Զավրիյանը մեկնում է Ս. Պետերբուրգ՝ ճանապարհին լինելով Թիֆլիսում, էջմիածնում ու հանդիպելով Ազգային բյուրոյի անդամներին, ապա Գևորգ Ե-ին [ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 57, թ. 7, Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), 2004, 23-24]: Հետաքրքիր են Ս. Պետերբուրգից արդեն հայտնի Ե. Վիշինսկուն մայիսի 18-ին գրված նամակը: Այն հետաքրքիր տեղեկություններ է տրամադրում 1913 թ. ռուսական վերնախավի տրամադրությունների մասին: Նամակի բովանդակությունը փոխանցելիս պետք է առանձնացնել երեք կարևոր շերտ: Առաջինը նա շնորհակալություն է հայտնում Ե. Վիշինսկուն փոխարքային և նրա շրջապատին պատշաճ ու ցանկալի տեղեկատվություն տրամադրելու, հայերի համար ընդունելի ըմբռնում ձևավորելու համար [ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53, թ. 20 շրջ.]: Երկրորդ. նա նշում է, որ վերնախավի, նրա բառերով՝ «բարձրագույն մարդկանց», վերաբերմունքը հայկական խնդրի վերաբերյալ բարեհաճ է, բայց նրանք ռազմական ճնշմանը դեմ են և ցանկանում են ամեն ինչի հասնել միայն դիվանագիտական ճանապարհով: Հ. Զավրիյանը գրում է, որ ռազմական ճնշման արդյունավետության վերաբերյալ իր բացատրությունները չեն ընդունվում նախ այն պատճառով, որ

ժողովը կազմվելու էր հավասար թվով մահմեդականներից և քրիստոնյաներից: Հավասարության սկզբունքը կիրառվելու էր նաև վարչական խորհուրդներում, դատարաններում, ոստիկանությունում և ժանդարմերիայում: Նահանգի տարածքում արգելվելու էր բնակեցնել մուհաջիրներին: Համիդիե գնդերը արձակվելու էին: Մեծ տերությունները իրենց հսկողության տակ էին վերցնելու այդ որոշումների իրականացումը: *Будущее устройство Армении, л. 25-34.*

* Դուայենը (ֆրանսերեն՝ ավագ) որևէ երկրի դիվանագիտական կորպուսի ղեկավարն է:

Ռուսաստանի վերնախավը ներքին ցնցումներ թույլ չտալու պատճառով վախենում է պատերազմից, այսինքն՝ հասարակությունը պատրաստ չէ պատերազմի, ապա նրանց վրա մեծ ազդեցություն է թողել Գ. Ռասպուտինի* խոսքն այն մասին, որ պատերազմը կցնցի ցարի գահը [ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53, թ. 20]: Երրորդ՝ նամակագիրը ասում է, որ ռուսական վերնախավը գոհ է հայ քաղաքական ուժերի զսպված վարքագծից, տակտից, չափավոր պահանջներ դնելու հանգամանքից և ամենակարևորը միավորվելու կարողությունից [ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53, թ. 20 շրջ.]:

Ս. Պետերբուրգում հունիսին Հ. Զավրիյանը նաև մասնակցում է Պետերբուրգի հայկական խմբակի նիստին, որում խիստ կարևորում է ռուսական մամուլում Հայոց հարցի լայն լուսաբանմանը: Նրանք բոլորը հայոց նկատմամբ ռուսական մամուլի դրական վերաբերմունքը համարում էին խիստ արժեքավոր Հայաստանի բարենորոգումների խնդրի առաջխաղացման տեսակետից [Սիմոնյան, 2013, 538-539]:

Ս. Պետերբուրգում Հակոբ Զավրիյանի գտնվելու ժամանակ հունիսի 11-ին Կ.Պոլսում սպանում են մեծ վեզիր Մահմուդ Շևքեթին, ինչը ցնցումներ է առաջ բերում երկրում: Այս պայմաններում հունիսի 30-ին բժիշկը գրում է Ե. Վիշինսկուն և բարձրացնում հայկական վիլայեթները Ռուսաստանին կցելու, այդ կապակցությամբ հայերին զենք տրամադրելու մասին: Ըստ նրա՝ փոխարքան համաձայնվել է մեծ քանակությամբ զենք տրամադրել, բայց Ս. Սազոնովը տատանվում է: Նա Ե. Վիշինսկուն խնդրում է այդ կապակցությամբ շտապ հայտնել իր կարծիքը [ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53 , թ. 21]: Ուշագրավ է, որ 1913 թ. օգոստոսի 17-24-ին Կարինում կայացած ՀՅԴ 7-րդ Ընդհանուր ժողովում քննվում է ռուսական իշխանությունների կողմից զենքի տրամադրման հարցը, որը դեռևս գարնանը մերժվել էր**, բայց չնայելով իր ընկերների զգացմունքներին, Հ. Զավրիյանը զենք ստանալու համար շարունակել էր բանակցել ռուսական կառավարության հետ: Ըստ սկզբնաղբյուրի՝ ժողովականների մեծ մասը այդ զենքի խնդրի մասին դժգոհություն է հայտնում, դա համարելով կուսակցության կյանքին ու անցյալին հակասող մի բան: Ըստ ժողովի մասնակիցների՝ նման պատասխանատու գործը կուսակցական ընկերները առանց կուսակցության մարմինների համաձայնության չպետք է առաջ մղեին: Դաշնակցական ընկերները բողոքել են Կոմսի և հատկապես Վիգենի [Փամփուքեան, 2023, 23] սաստիկ ռուսասիրական ձգտումներից: Արդյունքում առանց կուսակցական մարմինների համաձայնության զենքի հարցով ռուսական կողմի հետ հարաբերությունների մեջ մտնելու համար Կ.Պոլսի մարմնի կողմից Հ. Զավրիյանը պաշտոնապես նկատողություն է ստանում [ՀՅԴ նիւթեր, 2014, 15]: Նշելի է նաև, որ մինչ այդ՝ հուլիսի 6-ին, ՀՅԴ Կ.Պոլսի խառը ժողով որոշել էր Հ. Զավրիյանին դրամական հանգանակության համար ուղարկել Կովկաս [ՀՅԴ նիւթեր, 2014, 64]:

---

* Ռասպուտին Գրիգորի (1869-1916), ճանաչում է ձեռք բերել ցար Նիկոլայ Երկրորդի ընտանիքի հետ մտերմության շնորհիվ: 1910-ական թթ. պետերբուրգյան համապատասխան հասարակության շրջանակներում ունեցել է «մարգարեի, ցարի ընկերոջ, ծեր ճգնավորի, բուժակի, հեքիմի» համբավ:

** Հայտնի դաշնակցական Մարը (Միքայել Տեր-Մարտիրոսյան) 1913 հուլիսի 30-ին Թիֆլիսից Ս. Զավարյանին՝ Կ.Պոլիս գրած նամակում ուշագրավ տեղեկություններ է հայտնում զենքի հարցի մասին: Մասնավորապես նա նշում է, որ զենքի վերաբերյալ սկզբում Մեսրոպ եպիսկոպոսին /նամակում՝ առաջնորդին/ դիմել են ռուսական կառավարական շրջանակներից, թերևս փոխարքայի ռազմական հարցերով օգնական՝ Նիկոլայ Շատիլովը: Այնուհետև բանակցություններ են վարում հայ ազդեցիկ դեմքերը, ապա Հ. Զավրիյանը ու երբ հարցը հասնում է վեր, թերևս փոխարքային ու նա իմանում է, որ շշուկներ են տարածված, բարկանում է ու ի վերջո՝ մերժում: Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ժ, Պէյրութ, 2014 (այսուհետև՝ ՀՅԴ նիւթեր,), էջ 170, նաև Լեռ, Անցյալից, (Հուշեր, թղթեր, դատումներ), էջ 271:

Բարենորոգումների հարցի դիվանագիտական քննարկումների նոր փուլը: Պայմանագրի ստորագրումը

Ենի Քյոյում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ 1913 թ. սեպտեմբերի 10-ին Մ. Գիրսը և Հ. Ֆոն Վանգենհայմը համաձայնության են գալիս, որ պետք է երկու տեսուչներ լինեն, որոնք առաջարկվելու էին տերությունների կողմից և ունենալու էին բավականին ընդարձակ վերահսկողություն վարչակազմի վրա [Davison, 1948, 500, Dussen, 1986, 20][*]: Այս ծրագիրը ընդունվում է վեց պետությունների կողմից և Մ. Գիրսն ու Հ. Ֆոն Վանգենհայմը սկսում են բանակցել Բարձր դռան հետ, բայց այստեղ հետընթաց է գրանցվում, քանի որ թուրքական կողմը ցանկանում էր խուսափել միջազգային վերահսկողությունից [Davison, 1948, 501]: Օսմանյան կառավարության դիրքորոշման կոշտացումը պայմանավորված էր Մ. Թալեաթի, Ի. Էնվերի և Ա. Ջեմալի իշխանության ամրապնդման, Բալկանյան երկրորդ պատերազմում Ադրիանապոլսը վերագրավելուց ու ֆրանսիացի ֆինանսավորողների կողմից ստացած այն հավաստիացումներով, որ Ռուսաստանը երբեք ուժ չի կիրառի Արևմտյան Հայաստանում [Davison, 1948, 501][**]: Այդպիսով՝ Ս. Հալիմը խիստ ընդդիմանում է տերությունների առաջարկներին՝ նշելով, որ այդ առաջարկներով տեսուչները դառնում են տերությունների պատվիրակները, մինչդեռ իրենք կարծում են, որ նրանք պետք է լինեն թուրքական պաշտոնյաներ և Բարձր Դռան հետ հակասության դեպքում կարող են հեռացվել [Dussen, 1986, 21]:

Հոկտեմբերին թուրքական կողմը նորից դիմում է փորձված մեթոդի. մի կողմից՝ նրանք նորից Մեծ Բրիտանիայից պաշտոնյա են խնդրում, մյուս կողմից՝ փորձում են համաձայնության գալ հայերի հետ[***]: Երկու ուղղությամբ էլ նրանք անհաջողության են մատնվում[Davison, 1948, 501] :

---

[*] 1913 թ. սեպտեմբերի 10-ի ռուս-գերմանական համաձայնության կետերն էին՝

1.Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու՝ ա.Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և բ. Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա հատվածների, որոնք ղեկավարվելու էին տերությունների համաձայնությամբ նշանակվող երկու եվրոպացի ընդհանուր վեատեսուչների կողմից: 2.Վերատեսուչներն իրավազոր էին Բարձր Դռանը ներկայացնելու բարձր պաշտոնների և դատավորների թեկնածուների ցուցակը: Նրանց էր պատկանելու առանց որևէ բացառության բոլոր պաշտոնյաների արձակման իրավունքն: 3. Յուրաքանչյուր հատվածում հաստատվելու էր ընտրովի ժողով՝ բաղկացած հավասարապես մահմեդականներից և քրիստոնյաներից: 4. Հավասարության սկզբունքն ընդունվում էր նաև բոլոր պաշտոնների բաշխման ժամանակ: 5.Մեծ տերություններին իրավունք էր վերապահվում դեսպանների և հյուպատոսների միջոցով հսկելու բարենորոգումների գործադրմանը: 6. Բարձր դուռը պետք է համագործակցեր մեծ տերությունների հետ վերոհիշյալ երկու հատվածներում այլ բարենորոգումներ իրականացնելու դեպքում: Տե՛ս, Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գ. 2, Ե., 2015, էջ 142-143:

[**] 1913 սեպտեմբերին Թուրքիայի և Ֆրանսիայի միջև ֆինանսական և երկաթուղային հարցերով կնքվել էր նախնական համաձայնություն: Տե՛ս Мандельштам А., Младотурецкая держава историко-политический очерк, М., 1915, с. 49.

[***] Նշելի է, որ իթթիհատական կուսակցությունն ու կառավարությունը մի շարք փորձեր են կատարել համաձայնության գալու դաշնակցականների հետ 1913 թ. ընթացքում, բայց նրանց խոստումները վստահություն չեն ներշնչել, քանի որ նախորդ փորձը ցույց էր տվել. Թուրքերը հայերի հետ համաձայնության գալու միջոցին դիմում են այն ժամանակ, երբ բարենորոգումների հարցը սրվում էր և անտեսում իրենց խոստումները, երբ հարցը կորցնում էր իր սրությունը: Кеворкян Р., Геноцид армян, полная история, Москва, 2015, с. 179-187. Շատ ուշագրավ է հատկապես 1913 թ. դեկտեմբերի 20-ին Պետական խորհրդի նախագահ Խալիլ Մենթեշեիի հանդիպումը/կամ ները, որովհետև դեկտեմբերի 20-ին Զոհրապը հիվանդ էր և Մենթեշեն եկել խորհրդական, տեսուչ/ Գ. Զոհրաբի հետ հանդիպման, որի ընթացքում նա ասել

Նոյեմբերին մեծ վեզիր Ս. Հալիմը արդեն նոր ծրագիր է բերում, որում, հրաժարվելով ճանաչել եվրոպացի ընդհանոր տեսուչների գաղափարը, առաջարկում է երկու թուրքական ընդհանուր տեսուչներին ընդամենը նշանակել եվրոպացի խորհրդականների: Ի պատասխան՝ Մ. Գիրսը հանդես է գալիս նոր դրույթներով [Dussen, 1986, 21]: Ի վերջո, 1913 դեկտեմբերի 25-ին Հ. Ֆոն Վանգենհայմը և Մ. Գիրսը քննարկումներ են ունենում Մեծ վեզիրի հետ՝ եվրոպացի խորհրդականների փոխարեն առաջարկելով երկու եվրոպացի ընդհանուր-տեսուչներ: Բայց դեկտեմբերի 29-ին Ս. Հալիմի այդ հիմքով բանակցությունները շարունակելու համաձայնությունն անգամ, հարցը չի բերում տրամաբանական ավարտին, քանի որ այս անգամ էլ Մ. Գիրսը՝ ի պատասխան Օսմանյան կայսրությունում Լիման ֆոն Սանդերսի առաքելության* ընդունման և Իսմայիլ Էնվերին պատերազմի մինիստր նշանակելու* հարցերի հետ: Նա իր կառավարության կողմից ասաց, որ տերությունները պետք է ընդհանուր տեսուչ ներկայացնեն և օրենսդրական ռեֆորմների հարց բարձրացրեց [Dussen, 1986, 23, Davison, 1948, 503]:

Երբ հունվարի 19-ին Մ. Գիրսը գնաց, վերջնական պայմանները դեռ պատրաստ չէին: Մ. Գիրսի քայլը դժգոհություն էր առաջացրել ոչ միայն Եռյակ դաշինքի, այլ նաև իր դաշնակիցների մոտ, ովքեր սկսել են ճնշել: Մ. Գիրսին փոխարինած Գուլկևիչը ևս կողմ էր իրավիճակը չսրելուն [Davison, 1948, 503]: Ֆրանսիան փորձում է աջակցել Ռուսաստանին՝ խաղարկելով վարկ չտրամադրելու խաղաքարտը, բայց երբ հանձինս ԱՄՆ-ի ու Չեստերի ուրվագծվում են վարկատուներ, ֆրանսիացիների խաղաքարտը չեզոքանում է: Պետք է ասել, որ Կ. Պոլսի պատրիարքը ևս Կ. Պոլսում Ռուսաստանի կայսերական հավատարմատար Կոստանդին Գուլկևիչին խնդրում չհետաձգել բանակցությունները, և եզրափակել [Dussen, 1986, 23]: Նշված, ինչպես նաև պատերազմի մեջ ներքաշվելու գործոնների ազդեցությամբ Ս. Սազոնովը որոշակիորեն զիջում է, բայց նաև ձեռք է բերում որոշ զիջումներ [Davison, 1948, 504]: Վերջապես 1914 թ. հունվարի 26 (փետրվարի 8-ին] Կ. Գուլկևիչը և Մեծ Վեզիրը ու արտաքին գործերի մինիստր Սայիդ Հալիմը ստորագրում են պայմանագիրը՝ ասելով, որ գեներալ-տեսուչների նշանակման ժամանակ Բարձր Դուռը կդիմի տերություններին նոտայով՝ բացատրելով ընդհանուր-տեսուչների լիազորությունները և այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն ռեգիոններում [Dussen, 1986, 23]*:

էր, որ թուրքերը ավելի շուտ կմեռնեն, քան կընդունեն օտար տերության Հայկական հարցում ցանկացած միջամտություն, թեև նրանք գիտեն, որ երկիրը կմեռնի իրենց հետ: Իրենք դա դիտում են Թուրքիայի և Միություն և առաջադիմության համար որպես կյանքի և մահվան հարց: Գ. Զոհրաբը ընդունում է, որ կողմերը հասել են ճամփի վերջին, մինչև հայերի և թուրքերի միջև հարաբերությունները կվերածվեն պատերազմի: Հայ-թուրքական բանակցությունները դեկտեմբերին ձախողվեցին: Տե՛ս Кеворкян Р., նշվ. աշխ., էջ 183-185.

* Լիման ֆոն Սանդերս (1855-1929), գերմանացի գեներալ, Թուրքիայում ռազմական առաքելության ղեկավար 1913-1918 թթ.: Սանդերսի առաքելության շնորհիվ Գերմանիան հույս ուներ վերահսկողության տակ պահել ոչ միայն բանակը, այլ նաև Թուրքիայի ղեկավարությանը: 1913 թ. դեկտեմբերին Սանդերսը նշանակվում է Կ.Պոլսի ռազմական կորպուսի հրամանատար, իսկ 1914 հունվարին՝ թուրքական բանակի ընդհանուր տեսուչ: Լիման ֆոն Սանդերսի առաքելության առկայությունը դարձավ Թուրքիային առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներգրավելու արդյունավետ միջոցներից մեկը և արագացրեց միության վերաբերյալ 1914 թ. գերմանա-թուրքական պայմանագրի կնքումը: Պատերազմի տարիներին Սանդերսը ղեկավարում էր թուրքական բանակը, որը ապահովում էր Թուրքիայի նկատմամբ Գերմանիայի ոչ միայն քաղաքական, այլ նաև դիվանագիտական հսկողությունը:

** Իսմայիլ Էնվերը Պատերազմի մինիստր է նշանակվել 1914 թ. հունվարի 4-ին:

* Պայմանագրով նախատեսվում էր, որ երկու սեկտորների տեսուչները պետք է ունենային վարչական, արդարադատության, ոստիկանական, ժանդարմերական, իսկ եթե հանրային անվտանգության ուժերը բավարար

Հ. Զավրիյանը Գերմանիայում: Վերոներկայացված փուլում Հակոբ Զավրիյանը Ս. Պետերբուրգից Բեռլին է ուղևորվում, թերևս սեպտեմբերին**: Հայտնի է, որ Բեռլինից նա դիմել է Ս.Պետերբուրգի հայկական կոմիտեի բյուրոյին՝ խնդրելով անհապաղ 1000 ռուբլի աջակցություն ցույց տալ Հայկական հարցի ջերմ պաշտպան է և Եվրոպայում լայն քարոզչություն վարող «Pour les peoples d'orient» ամսագրին: Վերջինս, նոյեմբերի 8-ին անդրադառնալով Հ. Զավրիյանի նամակին, բավարարում է նրա խնդրանքը՝ միաժամանակ ցանկություն հայտնելով, որ խմբագրությունը հանդեսի օրինակներից ուղարկի այն անձանց, որոնց ցուցակը կներկայացնի ինքը [Սիմոնյան, 2013, 705]***:

Այդուհանդերձ, 1913 թ. աշնանը Հակոբ Զավրիյանի գործունեության վերաբերյալ տեղեկություններից առավել ծավալուն և բովանդակալիցը նրա շփումներն են Գերմանիայի ներկայացուցիչ Յ. Լեփսիուսի**** հետ:

Արդեն նշել ենք, որ Գերմանիան վերափոխումների հարցում իր քաղաքականությունը իրականացնելիս բազմաչափ կերպով էր գործում և այդ չափումներից մեկն էլ հայկականն էր: Նրանք իրենց քաղաքական շահերով, Բեռլին-Բաղդադ երկաթուղու հեռանկարով պայմանավորված՝ կարևորում էին հայերի մոտ դրական վերաբերմունք ձևավորելը, հայերի վրա Ռուսաստանի ազդեցությունը նվազեցնելը [Davison, 1948, 489, 492, Dussen, 1986, 20]: Բայց քանի որ պաշտոնական մակարդակով հայերի հետ շփումների հաստատումը Գերմանիայի համար դժվար էր, նրանք այդ խնդիրը լուծում են հայերի մոտ դրական հեղինակություն ունեցող Յ. Լեփսիուսի միջոցով, ով դեռևս 1890-ական թթ. կեսերից հայկական միջավայրում զբաղվում էր բարեգործությամբ ու քարոզչությամբ: Մեր տեղեկություններով առաջին անգամ Յ. Լեփսիուսը այս գործընթացում ներգրավվել է ամռանը և հայտնի է, որ օգոստոսին բանակցել է հայերի

չլինեն նաև ռազմական ուժեր պետք է դրվեին նրանց տրամադրության տակ նրանց դիմումի համաձայն: Ինչպես նաև իրավունք ունեին հանել ճիշտ չաշխատող պաշտոնյաներին և կառավարությանը առաջարկել պաշտոնյաներ: Հողային վեճերը նրանց ուղղակի վերահսկողության տակ էին: Եթե 10 տարվա մեջ նրանց պաշտոնը մնում է թափուր, Բարձր Դուռը պետք է համագործակցելով նշանակի նորին: Օրենքները և կարգադրությունները ամեն սեկտորում հրապարակվելու էին տեղական լեզուներով, բյուջեից համամասնորեն գումար է հատկացվելու հանրային կրթության համար: Համիդիեն դառնալու էր պահուստային հեծելազոր: Dussen W. van der, նշվ. աշխ., էջ 24.

** Բանն այն է, որ նոյեմբերին Ե. Վիշինսկուն գրած նամակում նա նշում է, որ երեք ամիս է, ինչ Գերմանիայում է: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53, թ. 16 շրջ.:

*** Հավելենք, որ 1914 թ. մարտին Բեռլինում կայացած ՀՅԴ խորհուրդը քննել է նշված ամսագրի հարցը և այդ կապակցությամբ ուշագրավ տեղեկություններ են պահպանվել: Այսպես «Pour les peoples d'orient» ամսագիրը սկսել է լույս տեսնել 1912 թ. ՀՅԴ արևմտյան բյուրոյի ներկայացուցիչ Միքայել Վարանդյանի միջոցով, բայց խմբագրությունը վարել են Ֆրանցիս դե Պրեսսանսեն, Վիկտոր Բերրարը և ուրիշներ: Այս ամսագիրը տպագրելու անհրաժեշտությունը առաջանում է այն ժամանակ, երբ ՀՅԴ-ն համոզվում է, որ առանց տերությունների միջամտության հայկական բարենորոգումների հարցը հնարավոր չէ գլուխ բերել: Ամսագրի նպատակը տերությունների ուշադրությունը արևմտահայերի վրա հրավիրելն էր: 1912-1913 թթ. կուսակցությունը ամսագրի վրա ծախսել է 15000 ֆրանկ ու տպագրել նույնքան տպաքանակով, բայց 300 օրինակ անվճար տրամադրվել է տարբեր հասարակական գործիչների ու հաստատությունների: 1914 թ. այն նորից վերանվանվել է «Pro Armenia» Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф. 102, оп. 253, д. 284, л. 4.

**** Լեփսիուս Յոհաննես (1858-1926), գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական, արևելագետ:

ներկայացուցիչների հետ [Dussen, 1986, 20]*: Իսկ 1913 թ. աշնանը Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության հանձնարարությամբ նա հանդիպումներ է ունենում այդ նպատակով Բեռլին ժամանած դաշնակցական Հ. Զավրիյանի հետ, ով իր հերթին այնտեղ էր մեկնել ռուսական իշխանությունների համաձայնությամբ իր բառերով ասած՝ օրհնությամբ: Բանն այն է, որ ռուսները հասկացել էին, որ իրենց առջև անհաղթահարելի խոչընդոտներ կան, որոնք կարող են չեզոքացվել միայն հայերի օգնությամբ: Այս մասին մենք տեղեկանում ենք Հ. Զավրիյանի Ե. Վիշինսկուն 1913 թ. նոյեմբերի 2-ի (15) գրված նամակից [ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53 , թ. 16 շրջ.]**:

Այդ կապակցությամբ 1913 թ. նոյեմբերի 15-ին Պոտսդամից Յ. Լեփսիուսը Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը գրել է զեկուցագիր և դրան կցել երկու հավելված: Դրանցից առաջինը՝ «Դաշնակցություն. Նրա կազմակերպությունը և ռեֆորմների հարցում դիրքորոշումը» նա գրել Հ. Զավրիյանի բանավոր ներկայացրածի հիման վրա, իսկ երկրորդի հեղինակը Հ. Զավրիյանն է: Այն վերնագրված է՝ «Հայկական Դաշնակցություն կուսակցությունը և երիտթուրքերը» [Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995, 129-138]***:

Նախ հետաքրքիր են այն կոնկրետ պայմանները որոնցում կողմերը հանդիպել են: Այդ օրերին, ինչպես վերը նշել ենք, երիտթուրքերը մերժել էին եվրոպացի գեներալ-նահանգապետի գաղափարը՝ առաջարկելով օսմանցի տեսուչներին կից նշանակել եվրոպացի խորհրդականներ: Միաժամանակ նրանք հայերին առաջարկել էին ընդունել հայկական պահանջները, եթե վերջիններս տերություններին դուրս թողեն գործընթացից: Բնականաբար թուրքական խոստումների արժեքին լավ ծանոթ հայերը մերժել էին և Հ. Զավրիյանը Յ. Լեփսիուսին ասել էր, որ տերությունների կողմից օսմանյան կառավարության պահանջները ընդունելը Դաշնակցությունն ու պատրիարքարանը կդիտարկեն որպես ռեֆորմների գործընթացի տապալում [Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995, 129]: Ըստ Լեփսիուսի՝ հայերը վճռական են տրամադրված ռեֆորմների ծրագրի հարցում, հակառակ դեպքում կանցնեն ռուսական ճամբար: Մանավանդ, որ Ռուսաստանը արդեն իր ազդեցությունն է տարածել հայ զանգվածների վրա և միայն ռեֆորմների հետ կապված հաջողությունը կարող է հակազդել ժողովրդական տրամադրություններին: Հայերի տասնյակ տարիներով ձգվող հիասթափությունը այնքան է գրգռված, որ այժմ միայն դեսպանների կողմից

* Կոմսը իր հուշերում գրում է, որ ամռանը Յ. Լեփսիուսը Կ. Պոլսում մտերմիկ զրույց է ունեցել Հ. Զավրիյանի հետ, սակայն մենք այլ տեղեկություն չունենք այդ ընթացքում Հ. Զավրիյանի Կ. Պոլսում գտնվելու մասին: Մեզ հայտնի է, որ մայիսից նա գտնվում էր Ս. Պետերբուրգում, ապա աշնանը այնտեղից մեկնել է Բեռլին: // Փափազեան Վ., Իմ յուշերը, էջ 252:

** Հ. Զավրիյանը այդ նամակում նաև գրում է, որ տարբեր հանդիպումներ է ունենում ոչ շատ բարձր պաշտոնյաների հետ, որոնք կարող են խոսքը հասցնել ավելի վերև, գրում է հաշվետվություններ ու կարծես շատ բանի է հասել: Նա նաև դրական է արտահայտվում Պողոս Նուբարի գործունեության մասին ու հիշատակում է Վ. Կոկովցևի հետ կապված միջադեպի մասին: ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53 , թ. 16 շրջ.17: Վ. Կոկովցևի միջադեպի մասին ավելի մանրամասն տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 691-693:

*** Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы политического архива Министерства Иностранных Дел Кайзеровской Германии, под. ред. В. Микаеляна, Е, 1995, /այսուհետև՝ Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)/, с. 129-138. Ուշագրավ է, որ Հ. Զավրիյանն էլ իր հերթին Յ. Լեփսիուսի և Գերմանիայի բանակի երկու սպաների՝ Լանգեի և Վեստարիպի հետ (1912 թ.) Կ.Պոլսում հանդիպումների արդյունքում Գերմանիայի մերձավորարևելյան քաղաքականության վերաբերյալ իր պատկերացումները արտացոլում է 1914 թ. սկզբին Մ. Գիրսին գրած նամակում-զեկույցում: Международные отношения в эпоху империализма: документы из архивов царского и Временного правительств 1878-1917 гг.: Серия 3: 1914-1917. - М.; Л., 1931-1938, Т. 1, /այսուհետև՝ МОЭИ/, с. 117-119.

առաջարկվող ամբողջական և վերջնական որոշումը կարող է առաջացնել անվերջ սգից ազատվելու զգացողություն [Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995, 129-130]*:

Առաջին հավելվածում Դաշնակցությանը և Հ. Զավրիյանին վերաբերող ընդհանուր տեղեկություններից հետո կարևոր են, որ հայ-թաթական կռիվների ու Պարսկաստանում ՀՅԴ գործունեության, հատկապես նրա ռազմական ներուժի մասին վկայող տեղեկությունները [Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995, 131]: Բանն այն է, որ Յ. Լեփսիուսի մատնանշումն այն մասին, որ դաշնակցության ռազմական կազմակերպությունը տվյալ պահին էլ այն կարծիքին է, որ ի վիճակի է կազմակերպել զինված դիմադրություն Արևմտյան Հայաստանում, եթե Թուրքիայի բացասական դիրքորոշումը բարենորոգումների հարցում և նախկին ճնշման քաղաքականությունը այն անխուսափելի կդարձնեն: Դաշնակցությունը մտածում է, որ կարող է այն իրագործել, քանի որ բոլոր դեպքերում համոզված է կառավարության բարենպաստությանը, գուցե համագործակցությանը Կովկասում փողի և զենքի միջոցով, քանի որ ենթարկվում է վերջինիս հրահանգներին: Այստեղ Հ. Զավրիյանը կատարում է պնդումներ, որոնք գուցե բարենորոգումների ծրագրի ընդունման տեսանկյունից ազդում էին գերմանական կառավարության վրա**, բայց ավելի երկարատև առումով ու հատկապես Ա աշխարհամարտի պայմաններում վտանգավոր դեր էին խաղալու: Այսինքն՝ Գերմանիան ու նրա հովանավորյալ թուրքերը հայերին ու նրա ամենաազդեցիկ կուսակցությանը կարող էին դիտարկել ռուսական հրահանգներով գործող, նրանց կողմից ֆինանսավորվող, զինվող ուժի, այնինչ ռուսական կառավարությունը հայերին բացարձակ չէր ֆինանսավորում, իսկ զենքի տրամադրման հարցում, ինչպես վերը նշել ենք, մերժել էր:

Դաշնակցությունը պատրաստ է գործի ցանկացած ուղղությամբ թեքման: Նա կարող է փոխել իր ուղղությունը կշեռքի ռուսական կամ թուրքական նժարին: Առաջինը այն դիտարկում է հայ ժողովրդի շահերի տեսանկյունից, քանի որ դեռ հույս կա հայկական բարենորոգումները մտցնել, երկրորդը կլիներ ավտոմատ կերպով, այն ժամանակ, երբ հույս չէր լինի ռեֆորմների հարցում: Կովկասի հայության հետ 1903-1906 թթ. կատարվածը չի մոռացվել: Հայկական բարենորոգումների հարցում Եվրոպայի օգնության մեջ հույսն է հետ պահում Դաշնակցությանը նետվել Ռուսաստանի գիրկը: Այդպիսով՝ Հայաստանում կկազմակերպեր ապստամբություն և կարվեր այն ժամանակ, երբ ձեռնտու կլիներ Ռուսաստանի ցանկություններին: Դաշնակցության համար դա հեշտ կլիներ, քանի որ ռուսական քարոզչության հայ զանգվածներին արդեն գրավել է իր կողմը: Թեև հայտնի է, որ Ռուսաստանը ներկա պահին պատրաստ չէ, բայց պարբերաբար պատրաստվում է սպասվող բռնազավթմանը [Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995, 132]:

Ավելի ընդհանրական ներկայացնելով Հայկական հարցի հետ կապված Դաշնակցության սկզբունքային դիրքորոշումը և փորձելով ընդգծված ռուսական դաշտից դուրս գալ Հ. Զավրիյանը Յ.

---

* Տե՛ս նաև Խաչատրյան Ա., Բարենորոգումները Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ. և Գերմանիայի քաղաքականությունը 20-րդ դարի սկզբին/, Հայոց պատմություն մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 1999, էջ 39:

** Այդ կապակցությամբ Հ. Զավրիյանը 1913 թ. նոյեմբերի 4-ի նամակում Ե. Վիշինսկուն գրում է, որ գերմանացիները քայլեր են ձեռնարկում, քանի որ վախում են հայերի հնարավոր ապստամբությունից, որին կհետևի ռուսների ներխուժումը: Նրա կարծիքով՝ գերմանացիները, ցանկանում են ռեֆորմների հարցը մինչև վերջ չհասցնել, սակայն այդտեղ հայերն են կանգնած նրանց կոկորդներին: Հ. Զավրիյանը նաև նշում է, որ ռեֆորմների հարցին խոչընդոտելու նպատակով այդտեղ է գտնվում Զավիդ բեյը: ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53, թ. 17 շրջ.:

Լեփսիուսին ներկայացնում է, հայերը որ բաժանված են Թուրքիայի /1 895 000/ և Ռուսաստանի միջև /1 650 000/, չեն կարող ինքնավարություն ակնկալել ո՛չ Թուրքիայում, ո՛չ Ռուսաստանում: Այդ պատճառով պետք է օգտագործեն հավասարակշռության առավելությունը այդ պետությունների հետ, որպեսզի գոնե պաշտպանեն իրենց ազգային ինքնատիպությունը, որին Ռուսաստանում կսպառնար ամբողջական տարալուծում: Այդ առումով ոչ մի ազգ այնքան շահագրգռված չէ Թուրքիայի գոյությամբ, որքան հայությունը: Քանի որ միայն որևէ խոշոր պետական կազմավորման հետ հայերը կարող են հասնել առավել կարևոր նշանակության, այն պայմանով, որ իր համար ապահովված կլինեն գոյության նորմալ պայմաններ: Հայերը իրենք կստեղծեին Թուրքիա, եթե այն գոյություն չունենար նրանով, որ ի դեմս նրա ունենային աջակցություն ռուսական բռնազավթման դեմ [Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995, 132]:

Բացի այդ Հ. Զավրիյանը հայտնել է, որ որոշ հայ հայրենասերների աչքին երևում է ևս մեկ հնարավորություն: Եվրոպական պետական կառույցի զարգացման ժամանակ գործերը կարող են այնպիսի դասավորություն ստանալ, որի դեպքում Թուրքիայի լիկվիդացիան /հնարավոր է անխուսափելի/ Ռուսաստանի ներկա թուլության պայմաններում կարող էր ցանկալի դարձնել արևմտյան տերությունների համար անկախ Հայաստանի ստեղծումը որպես Ռուսաստանի դեմ բուֆերային պետություն: Այս հնարավորությանը, սթափ գնահատականի պայմաններում, պետք չէ հույս դնել [Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995, 133]:

Վերջապես, երիտթուրքերի հետ ՀՅԴ հարաբերությունների պատմության բավականին արժեքավոր ակնարկ ներկայացնելուց հետո Հ. Զավրիյանը գրում է, որ եթե դրությունը այսպիսին է, ապա դժվար գտնվի մեկը, ով չճանաչի հայերի ինքնապաշտպանության իրավունքը: Հայերը սպասում են եվրոպական պետությունների որոշմանը: Եթե երիտթուրքերին հաջողվի տերություններին այնպես տրամադրել, որ վերջիններս ետ կանգնեն դեսպանների կողմից ընդունված բարենորոգումների ծրագրից և բավարարվեին ,,ռեֆորմների թուրքական ծրագրով,, առանց եվրոպական տեսուչների և վերահսկողության, ապա տերությունների նախաձեռնությունը կտապալվի, որովհետև երիտթուրքերը ոչ միայն կտապալեն բարենորոգումները այլ նաև այն կդարձնեն հայ ժողովրդին ճնշելու գործիքի [Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995, 138]:

Քննելով Հ. Զավրիյանի Յ. Լեփսիուսի հետ զրույցների բովանդակությունը՝ կարելի է առանձնացնել երեք շեշտված շերտ: Առաջին՝ ընթացիկ գործնականն է, ըստ որի հայերը բարենորոգումների եվրոպական ծրագրի չընդունման դեպքում Ռուսաստանին հարմար ժամանակ, նրանց ֆինանսական և ռազմական աջակցությամբ կապստամբեն, ինչը կարող է բերել Ռուսաստանի միջամտություն, որին թեև նա դեռ պատրաստ չէ, բայց պատրաստվում է: Երկրորդ շերտը առաջինի հակաթեզն է այն մասին, որ հայերը չեն մոռացել 1903-1906 թթ. Ռուսաստանի վարած հակահայկական քաղաքականությունը, հայերի ինքնության պահպանման վտանգները և այդ առումով Թուրքիան կարևոր հակակշիռ է, որ եթե այն չլիներ, հայերը իրենք պետք է ստեղծեին: Երրորդ շերտը իդեալականն է, ըստ որի նա հայտնում է որոշ հայ շրջանների երազանքը եվրոպական երկրների օգնությամբ Օսմանյան կայսրության փլուզման ու Ռուսաստանի թուլության դեպքում Հայաստան պետության ստեղծում՝ որպես Ռուսաստանի դեմ բուֆերային պետություն: Այս դիտարկումները համեմատելով Ե. Վիշինսկուն գրած նամակի հետ՝ դժվար չէ տեսնել հակաթեզն այնտեղ հասկանալի պատճառներով չի զարգացված, իսկ իդեալական մասը կա, բայց ակնկալվում է

հայկական ինքնուրույն գավառների ստեղծում Ռուսաստանի կողմից: Այսինքն՝ Հակոբ Զավրիյանը և հայ քաղաքական շրջանակները, չնայած դեպի տարբեր կողմեր ճկվելուն, ցանկական մակարդակում ձգտում էին հայկական առանձին պետության կամ գոնե ինքնավարության:

Նորից Պետերբուրգում: 1913 թ. դեկտեմբերին Հ. Զավրիյանը վերադառնում է Ս. Պետերբուրգ, այդ կապակցությամբ Գ. Զոհրապը իր օրագրում նշում է, որ Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպանատունը նրան Պետերբուրգ ուղարկելուց օգուտ է ակնկալում [Զոհրապ, 2003, 348]:

1913 դեկտեմբեր - 1914 հունվար ամիսներին Ս. Պետերբուրգում գործունեության մեջ առանցքայինը նրա հանդիպումներն են Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության Մերձավոր Արևելքի դեպարտամենտի վարիչ իշխան Տրուբեցկոյի* հետ: Դեկտեմբերի վերջին, ինչպես վերը նշել ենք, բարենորոգումների հարցում առկա խնդիրները իրենց արտացոլումն են գտել նաև նրա տրամադրություններում, որտեղ նկատվում է ռեֆորմների հարցի ձգձգման վերաբերյալ անհանգստություն: Նաև նշվում է, որ թուրքերը նոր ռազմանավ են գնել*, ինչը շատ է բարձրացրել թուրքական կառավարության տրամադրությունը [ՀԱԱ, Միկրոժապավեններ, АВПР, ф. Политархив, г. 1913, д. 3465, л. 102, 132.]:

Իսկ 1914 հունվարի 17/30-ին, Հ. Զավրիյանը նամակ է ուղղում ռուս իշխանին, հայտնում շնորհակալությունը և նշում, որ իշխանը նախորդ օրը փարատել է հայկական բարենորոգումների խախուտ վիճակի վերաբերյալ իր կասկածները: Հ. Զավրիյանը նաև բանաձևում է իշխան Տրուբեցկոյի հետ խոսակցությունից իր ստացած տեղեկատվությունը: Դրանցից առավել կարևորները նրանք են, որ Հայկական հարցը Ռուսաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող խնդիրներից համարվում է կարևորագույններից, որ թուրքական կողմին ներկայումս կատարվող հարկադրված զիջումներից հայերը չպետք է վրդովվեն, քանի որ Ռուսաստանի նպատակը այժմ գոնե բարենորոգումների հիմքերը դնելն է՝ հետագայում ընդլայնելու և ամրապնդելու համար, և որ հայ տարրը Ռուսաստանին պետք է նաև իր տնտեսական նվաճումների համար, ոչ միայն Հայաստանի սահմանների մեջ, այլ նաև դրանից դուրս [МОЭИ, 1931, 171–172] :

Եզրակացություն: Սույն հոդվածը շարադրվել է համաշխարհային ու ազգային մակարդակներում տեղի ունեցող գործընթացների համատեքստում հայտնի քաղաքական գործիչ Հակոբ Զավրիյանի գործունեությունը ներկայացնելու, նրա դերն ու ազդեցությունը այդ գործընթացներում որոշակիացնելու, գնահատելու ճանապարհով: Ըստ այդմ՝ ստորև կփորձենք ներկայացնել մեր ամփոփիչ դիտարկումները նախ հայկական ռեֆորմների գործընթացի, ապա Հ. Զավրիյանի գործունեության վերաբերյալ:

Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու նախաձեռնությունը պատկանում էր Ռուսաստանին, որը Արևելյան հարցում իր ավանդական քաղաքականությանը վերադառնալու պայմաններում մշակում և իրականացնում է Օսմանյան կայսրության կործանմանը նպաստող գործողությունների շարք, որոնցից մեկն էլ Հայկական հարցի վերաբացումն էր: Նրա վերջնանպատակների շարքում կար նաև Արևմտյան Հայաստանի կլանումը:

---

* Տրուբեցկոյ Գրիգորի (1873-1930), ռուս հասարակական, հոգևոր, եկեղեցական և քաղաքական գործիչ, դիվանագետ, հրապարակախոս: 1912 թ. Սազոնովի կողմից նշանակվել է ԱԳՆ-ի Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ:

* Մենք չկարողացանք պարզել, թե խոսքը ինչ նավի մասին է: Գեբեն և Բրեսլաու նավերը թուրքական կողմը «գնել» է 1914 թ. օգոստոսի 11-ին:

Հայ քաղաքական ազդեցիկ ուժերը դժբախտաբար ի վիճակի չեն լինում համաշխարհային ու տարածաշրջանային գործընթացների երկարաժամկետ տեսլական ձևավորել և ինքնուրույն քաղաքականություն վարել: Նրանք ուղղորդվում, վերահսկվում են Պետերբուրգի քաղաքականությունը իրականացնող Կ.Պոլսի ռուսական դեսպանության և Կովկասի փոխարքայի գրասենյակի կողմից:

Ամբողջ գործընթացի շարժիչ մեխանիզմը ծանր վիճակում գտնվող արևմտահայերի ընդվզման, ապստամբության և դրան տրամաբանորեն հաջորդելիք ռուսական ներխուժման վտանգն ու սպառնալիքն էր, որը կարող էր բերել Օսմանյան կայսրության բաժանման: Բայց իրականում հայկական կողմը բավարար մասշտաբային և հարաբերականորեն երկարատև դիմադրություն կազմակերպելու ռազմական ներուժ չուներ, իսկ Ռուսաստանն էլ պատրաստ չէր դիմելու ռազմական ներխուժման:

Այդ փուլում թե՛ Ռուսաստանի դաշնակիցների, և թե՛ Եռյակ դաշինքի երկրների գլխավոր խնդիրը Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումն էր, նրանցից որևէ մեկը պատրաստ չէր անմիջապես անցնել նրա բաժանմանը, ուստի ռեֆորմների գործընթացը նրանց համար հայերի ընդվզում, Ռուսաստանի ներխուժում և Օսմանյան կայսրության բաժանում թույլ չտալու, այդ արդյունքը հետաձգելու միջոց էր: Հայկական ռեֆորմները, հայերի դրության բավարարումը նրանց համար երկրորդային էր:

Օսմանյան կայսրության համար ռեֆորմների գործընթացը ևս այդ փուլում Ռուսաստանի ներխուժում և կայսրության կործանում թույլ չտալու միջոց էր, նպատակը որևէ օտար միջամտություն իրենց ներքին գործերին թույլ չտալն ու թուրքերի պետական շահերից բխող հետևողական քաղաքականության շարունակումն էր:

1914 թ. հունվարի 26-ի ռեֆորմների պայմանագրի ստորագրումը այս կամ այն չափով բավարարեց բոլոր կողմերին, ավելի քիչ հայերին: Չեզոքացվեց հայերի հնարավոր ապստամբության, Ռուսաստանի հնարավոր ներխուժման ու օսմանյան տերության կործանման գործընթացը:

Հայերի համար ստեղծվում է սպառնալից իրավիճակ, քանի որ նրանք թուրքերի կողմից սկսում են դիտվել ռուս-թուրքական հակամարտության օբյեկտ, խզվում են հայ-թուրքական վերնախավերի կապերը, երկու ազգերի հարաբերությունները հասնում են թշնամության առավել բարձր աստիճանին: Իսկ թուրքերի ու գերմանացիների դիտանկյունից հայերը սկսում են ընկալվել որպես Ռուսաստանի կողմից ղեկավարվող, վերահսկվող, ֆինանսավորվող, զինվող ու ապստամբության ներուժ ունեցող տարր: Այդպես հայերը ներկայանում էին օրինակ՝ Հ. Զավրիյանի տեղեկությունների հիման վրա գրված Յ. Լեփսիուսի զեկույցներում:

Ա. Աշխարհամարտի սկզբում և հետո հայերի կողմից՝ իրենց քաղաքացիական պարտականությունները կատարելու վերաբերյալ հավաստիացումներն ու գործողությունները անհամոզիչ էին Քառյակ միության պետությունների համար, որովհետև հայերի մարտավարական խնդիրները գերակայել էին ռազմավարական նպատակների վրա: Իրականում Արևմտյան Հայաստանում ռեֆորմների իրականացման հարցի բարձրացման ու քննարկման շրջանում տեղի ունեցած բոլոր իրադարձությունները Հայոց ցեղասպանության նախադրյալների հասունացման գագաթնային փուլն էին. մնացել էին ընդամենը մի քանի ակորդներ:

Activites of Hakoba Zavriyan during the resumption of the Armenian question (1912-1914)

Հակոբ Զավրիյանի գործունեությունը Հայկական հարցի վերաբացման տարիներին (1912-1914 թթ.)

Հ. Զավրիյանը ազգային հարթությունում զգալի կազմակերպչական և ստեղծագործական աշխատանքներ է կատարում հայերի տարբեր շերտերի համախմբման, ծրագրերի ու վիճակագրական նյութերի մշակման գործում:

Բայց նա առավել մեծ դերակատար է դառնում միջազգային ասպարեզում ռեֆորմների հարցը առաջ մղելու գործում՝ հատկապես ռուսական և գերմանական կողմերում շփվելով, իր գրություններով, զեկույցներով, անձնական կապերով ազդելով վերին օղակներում կազմակերպվող քաղաքականության վրա, փորձելով դրանց տալ հայանպաստ ուղղություն:

Հաշվի առնելով ռուսական դիվանագետների հետ նրա սերտ կապերը՝ արդյոք նրան կարելի է համարել ռուսական գործակալ կամ ազդեցության գործակալ: Նա գործակալ չէր կարող լինել բազմաթիվ վկայությունների հիման վրա ձևավորվող նրա հոգեբանական կերտվածքի, ազնվության, նյութապես անապահով, գերեթե սոված կյանք վարելու, բացահայտորեն իր դիքորոշումները կուսակցությունում ներկայացնելու, պաշտպանելու, ռուսական կողմի հետ կուսակցության գիտությամբ ու հանձնարարությամբ հարաբերություններ վարելու, ինչպես նաև մինչ օրս գործակալական բնույթի իր ազգի ու կուսակցության դեմ ուղղված որևէ փաստաթուղթ չհայտնաբերելու պատճառով:

Մեր կարծիքով՝ նա ազդեցության գործակալ չի կարող դիտվել, քանի որ տարիներ շարունակ առանց անձնական, նյութական շահախնդրության փորձել է համադրել հայերի ու Ռուսաստանի շահերը՝ իր խորին համոզմամբ հայերին գոյաբանական սպառնալիքի վիճակից դուրս բերելու և ազգային իղձերը իրականացնելու գերնպատակով: Նա հստակ պատկերացրել է հայերի համար Ռուսաստանից բխող վտանգները, պատրաստ է եղել հարմար այլընտրանքի դեպքում դեմ հանդես գալ Ռուսաստանին:

Ռեֆորմների հարցի արծարծման շրջանում Հ. Զավրիյանը որպես գործունեության ճիշտ ուղղություն համարել է զինվելը, ինքնապաշտպանության պատրաստվելը, դրանով են պայմանավորված եղել ռուսական կառավարության հետ զենք ձեռք բերելու հարցի շուրջ նրա համառ բանակցությունները: Նա կարծում էր, որ Օսմանյան կայսրության իշխանության տակ հայերի համար դրական տեղաշարժեր չեն լինելու, ուստի հայերի ինքնապաշտպանությամբ և ռուսների ներխուժմամբ անհրաժեշտ էր ապահովել հայերի ֆիզիկական գոյությունը:

Հայերի համար իդեալական վերջնարդյունք նա համարում էր Ռուսաստանի դեմ Եվրոպայի աջակցությամբ բուֆերային Հայաստանի ստեղծումը, դրան զիջում էր Ռուսաստանի իշխանության տակ ինքնավար հայկական տարածքի գաղափարը:

Յ. Լեփսիուսի զեկույցների համար հիմք հանդիսացած Հ. Զավրիյանի տեղեկությունները, դուրս էին Մ. Գիրսի՝ Եվրոպայի առջև զոհ երևալու խորհրդից և հետագայում, անշուշտ, բացասական դեր են կատարում արևմտահայերի համար՝ նպաստելով գերմանացիների ու նրանց դաշնակից թուրքերի մոտ նրանց որպես ռուսների կողմից ուղղորդվող, ապստամբների կերպարի ձևավորմանը: Բայց, կարծում ենք, որ ռեֆորմների ծրագրի ընդունմամբ տարված Հ. Զավրիյանը, եթե անգամ գիտակցում էր իր հայտնած տեղեկությունների թողելիք բացասական ազդեցության հետևանքները, Բալկանյան պատերազմում թուրքերի կրած ծանր պարտության թարմ

ազդեցությունը դժվար թե նրան իրավիճակը, հետագա վտանգները սթափ գնահատելու հնարավորություն տար:

Վերջապես, մյուս կողմից էլ դժվար է ասել, թե արտաքին որևէ ազդեցության տուրք չտալու դեպքում, իթթիհատականները ստեղծված ծանր պայմաններում ինչպիսի վարքագիծ կընտրեին կամ թուրքական պետության մեջ հայերին ինչպիսի տեղ ու դեր թույլ կտային ունենալ:

Գրականության ցանկ

Աղոնց Ն. (1996), հ. Ա, Հայկական հարց, Երևան, «Հայագիտակ» հրատ, 244 էջ:

Անանուն Դ. (1926), Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918), հ. 3, Վենետիկ, Ս. Ղազարու տպ, 694 էջ:

Բոյաջյան Հ. (2010), Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912–1914 թթ., Երևան, «Պատմության ինստիտուտ» հրատ, 208 էջ:

Գալոյան Գ. (2004), Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 822 էջ:

Գեղամեանց Ե. (1916), Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը, Ա մաս, Բաքու, "Труженикъ" հրատ., 90 էջ :

Զոհրապ Գ. (2003), Երկերի ժողովածու, հ. Դ, Նամակներ, ընծայագրեր, օրագրություններ, աշխատասիրությամբ՝ Ա. Շարուրյանի, Երևան, :

Թաթոյան Ռ. (2015), Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին, Երևան, ՀՑԹԻ հրատ., 216 էջ:

Լեո (1925), Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս» հրատ, 480 էջ:

Լեո (1994), Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Երևան, «Շաղիկ» հրատ., 264 էջ:

Խաչատրյան Ա. (2000), Բարենորոգումները Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ. և Գերմանիայի քաղաքականությունը Թուրքիայում 20-րդ դարի սկզբին (թեկնածուական ատենախոսություն), Երևան, 179 էջ:

Կիրակոսյան Ջ. (1965), Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, «Հայաստան» հրատ., 511 էջ:

ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 53, ֆ. 57, ց. 5, գ. 28, միկրոժապավեններ, ֆ. Политархив, 1894-1917 гг., д. 3459, 1912 г., д. 1044, 1913 г., д. 3465.

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) **(1972)**, խմբ.՝ Ջ. Կիրակոսյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 810 էջ:

Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու **(1991),** խմբ.՝ Մ. Ներսիսյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 758 էջ:

Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), **2015,** գ. 2, Երևան, «Զանգակ» հրատ., 760 էջ:

Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու **(2004),** Երևան, 787 էջ:

Հովհաննիսյան Լ. (2002), Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Երևան, «Զանգակ» հրատ., 182 էջ:

Մանվելյան Ս. (2019), Հայկական հարցի վերաբացումը. Հայկական բարենորոգումների ծրագիրը Հովհաննես Արշարունի պատրիարքի օրոք (1911-1913), «Գիտական Արցախ», Երևան, N1(2), էջ 382-390:

Մասուրեան Ս. (1928), Հայկական բարենորոգումները (Սազոնովի հուշերից), «Հայրենիք», Բոստոն, թիվ 5 (65), էջ 138-149:

Մինասյան Մ. (2004), Հայ առաքելական եկեղեցին և հայկական հարցը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում (1912-1918 թթ.) (թեկնածուական ատենախոսություն), Երևան, 189 էջ:

Միքայելյան Ն. (1965), Արխիվային նոր նյութեր Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի վիճակի մասին // «Էջմիածին», 1965, Ե-Զ-Է, էջ 182-196:

Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար **(2014)**, հ. Ժ, Պէյրութ, «Համազգայինի Վահէ Սէթեան» հրատ., 544 էջ:

Սարգսյան Ե. (1964), Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երևան, «Հայաստան» հրատ, 540 էջ:

Սարուխանյան Ն. (1997), Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 272 էջ:

Սիմոնյան Հ. (2013), Ազատագրական պայքարի ուղիներում, գ. V, Երևան, «ԵՊՀ» հրատ., 1296 էջ:

Փամփուքեան Ե. (2023), Հ.Յ. Դաշնակցութեան ծածկանուններու բառարան: Անձնանուններ, տեղանուններ, թուանշանային ծածկագրեր, Երևան, «Լուսակն» հրատ., 253 էջ:

Փափազեան Վ. (1952), Իմ յուշերը, հ. 2, Պէյրութ, «Համազգային ընկերութեան» տպ., 610 էջ:

Փափազյան Վ. (1934), Հայկական բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, թիվ 1, յունուար-փետրուար, էջ 62-75:

Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы политического архива Министерства Иностранных Дел Кайзеровской Германии **(1995)**, под. ред. В. Микаеляна, Е, изд-во ''Гитутюн'', 644 стр.

Борьян Б. (1928), Армения международная дипломатия и СССР, ч.чч 1, М-Л., Государственное изд-во, 448 стр.

Будущее устройство Армении по официальным документам Оранжевой книги, трактуюшей Реформы в Армении **(1915),** Петроград, изд-во ''Освобождение'', 94 стр.

Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, **(2002)**, сост. Ю. Барсегов, т. 1, М., изд-во ''Гардарики'', 816 стр.

Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф. 102, оп. 253, д. 284, л. 4.

Кеворкян Р. (2015), Геноцид армян, полная история, Москва, изд-во ''Яуза-каталог'', 912 стр.

Коджоян Р. (1990), Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны /кандидатская диссертация/, Ереван, 200 стр.

Мандельштам А. (1915), Младотурецкая держава. Историко-политический очерк, М., изд-во "И.Н.Кушнеревъ и К°", 68 стр.

Международные отношения в эпоху империализма: документы из архивов царского и Временного правительств 1878-1917 гг.: **(1931-1938),** Серия 3: 1914-1917. Т. 1 - М.; Л., изд-во "Гос-соц.-экон.", 614 стр.

Сазонов С. (1991), Воспоминания, М., изд-во "Международные отношения", 399 стр.

Саркисян Е. (1995), Армянский вопрос и Россия в 1912-1914 гг., «Պատմաբանասիրական հանդես», Երևան, N 1, էջ 111-124:

Татоян Р. (2015)., Вопрос этнического состава населения Западной Армении в контексте русско-турецких переговоров вокруг проекта армянских реформ в 1913-1914 гг." Первая мировая война: взгляд спустя столетие. 1914 год: от мира к войне: доклады и выступления участников III международной научно-практической конференции, М., изд-во МНЭПУ, стр. 692-700.

Boghos Nubar's (1996), Papers and the Armenian Question 1915–1918. Documents, ed. by V. Ghazarian, Waltham, U.S. A. Mayreni Publishing, 459 p.

Davison R. (1948), The Armenian Crisis 1912-1914, «The American Historical Review», New York, vol. 53, N 3, pp 1-25.

Dussen W. van der (1986), The Question of Armenian Reforms in 1913-1914, «Historical Review», vol. 39, N 1, pp. 11-28.